ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՅՈՎՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԱԼԻ

THE HOLY GOSPEL ACCORDING ST. JOHN

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2003

Մ Ո Ւ Տ Ք

ԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿ--ՅՈՎՀԱՆՆԷՍ

Յովհաննէս Առաքեալ որդին էր Զեբեդէոսի և Սողոմէի, որ կը կարծուի Քոյրը ըլլալ Յիսուսի մօր՝ Ս. կոյս Մարիամի ըստ Մատթ. ԻԷ.55 և Յով. ԺԹ.25 համարներուն: Սողոմէ կ՚ընկերակցէր այն կիներուն, որոնք իրենց ծառայութեամբ կ՚օգնէին մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի՝ Իր աւետարանչական առաքելութեան շրջանին ու մասնակից եղաւ այն կիներուն, որոնք Յարութեան առաւօտուն գացին, որ զմռսեն Յիսուսի Մարմինը:

Յովհաննէս՝ երեակ և ամենամտերիմ աշակերտներէն (Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս) մին էր Յիսուս Քրիստոսի: Գալիլեացի Վարդապետին այս սրտակից աշակերտները առանձնաշնորհուեցան, ականատես ըլլալու պայծառակերպութեան լերան վրայ, իրենց հրաշագործ Վարդապետին լուսահանդերձ և երկնատեսիլ երեւոյթին և լսել աստուածաբարբառ ցնծերգը.

***«Ասիկա՛ է իմ սիրելի Որդիս, որուն հաւնեցայ. Ասո՛ր մտիկ ըրէ՛ք»*--Մատթ.ԺԷ.5:**

Տասներկուքէն միայն այս երեք աշակերտները արտօնուեցան Յայրոսի տունը մտնել և վկայ հանդիսանալ անոր աղջկան յարութեան: Յովհաննէս՝ այս երեք ամենահաւատարիմ աշակերտներէն մին էր որ ընկերացաւ Յիսուս Քրիստոսի որպէս պաշտպան թիկնապահ, Գեթսեմանի պարտէզին մէջ և ականջալուր եղաւ իր Տիրոջ աղօթքին ու ականատես Անոր ճգնաժամային տագնապին երբ Յիսուսի բրտինքը կ՚իջներ նման արիւնի կաթիլներու: Վերջապէս Յիսուս Քրիստոս, Յովհաննէս աշակերտը պաշտպան կանգնեց Իր մօրը: Մարդեղեալը վստահեցաւ Ս. Տիրամայրը Յովհաննէս աշակերտին խնամքին: Մեծագոյն պատիւ մը, որուն արժանացաւ աւետարանագիր հեղինակ Յովհաննէս առաքեալ:

Յովհաննու Աւետարանը մեծապէս գնահատուած է որպէս ***«Հոգեւոր Աւետարան»*** Աղեքսանդրիոյ իմաստասէր Կղեմէս հայրապետին կողմէ: Չորս Աւետարաններու մէջ ամենայատկանշականն է Յովհաննու Աւետարանը և աստուածաբան վարդապետութիւններու մեծ տոկոսը հիմնուած է անոր վկայագրութիւններուն վրայ:

Յովհաննու Աւետարանը հնագոյն դարերէ ի վեր ընդունուած է որպէս Կանոնական Աւետարան: Ս. Իգնատիոս՝ իր նամակին մէջ (110 թ.) մէջբերումներ կ՚ընէ սոյն Աւետարանէն, Նոյնպէս ալ Յուստինոս վկան (150-թ.):

Հաւաստիօրէն կը կարծուի, որ Յովհաննէս Առաքեալ երբ արձակուեցաւ

Պատմոս կղզիի արգելափակումէն, վերադարձաւ Եփեսոս, որ 60 մղոն հեռու էր և հոն գրեց Չորրորդ Աւետարանը 98 թուին. որպէս իր աւետարանաշունչ կտակը յետագայ հաւատացեալներուն:

Յովհաննէս Առաքեալ ապրեցաւ մինչեւ խոր ծերութիւն: Հաւանական է որ Չորրորդ Աւետարանը գրուած է մօտ 90-95 թուականներուն: Կարելի է նաեւ ընդունիլ, որ միւս երեք Աւետարանները մատչելի էին Յովհաննէս Առաքեալին, և ինք՝ ջանաց աւելի վարդապետակա՛ն տեսանկիւնէն գրել իր Տիրոջ խրատները օգնելու համար ժամանակակից եկեղեցւոյ կանոնադրութեան և վարդապետութեան:

Ան կ՛ընտրէ հատընտիր դէպքեր և ատութիւններ պարզաբանելու և վկայելու իր Վարդապետին աստուածՈրդիութիւնը և Մարդեղութիւնը:

«Յիսուս իր աշակերտներուն առջեւ շատ նշաններ ալ ըրաւ, որոնք գրուած չեն այս գիրին մէջ: Այլ՝ ասիկա այն չափով գրուեցաւ, որպէսզի դուք հաւատաք թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին» --Յով. Ի.30-31

Յովհաննու Աւետարանը զատորոշ է համագոյց աւետարաններէն (Մատթէոս, Մարկոս և Ղուկաս) և ինքնայատուկ է: Յովհաննու Աւետարանը նուազ պատմագրական է և առաւել խորհրդաբանական, ուր, փոխանակ Յիսուս Քրիստոսի կենսագրութիւնը նկարագրելու, ան կը յայտնաբանէ Յիսուսի արգասանդ և թելադրական խորհուրդները և բառերուն տակ թաքնուած իմաստը: Ան կը պեղէ աստուածային մարգարէաշունչ պատգամին զարմանահրաշ խորհուրդը և գաղտնիքներու թափանցելու խիզախ խորացումով և խորհրդազգաց վերացումով ***«Խորհուրդ Մեծ և Սքանչելի»*** ն կը պարզաբանէ հաւատացեալներուն: Լուսահանդերձ Գալիլեացիի խորհրդանշող բոլոր ապրումներուն հետ՝ Անոր ներմարմնային իրականութիւններն ալ կը մատնանշէ Աղեքսանդրիոյ և Աթէնքի իմաստասիրական հետեւողութեամբ:

Որքան բանաւոր՝ նոյնքան ալ խորհրդազգած կերպով, կուռ և ոգեկան ներհայեցողութեամբ ան գրած է Աւետարանին յառաջաբանը (Յով. Ա.1-18) ուսումնատենչ և իմաստասէր մտքերուն:

Սրբազան գրութիւններու մէջ՝ Յովհաննու Աւետարանը բացառիկ և եզակի կերպով առանձինն թարգմանուած է բազմազան լեզուներու և մատչելի դարձած բոլոր աշխարհի ժողովուրդներուն:

Քանի մը իրադարձութիւններ և հրաշքներ կան Յովհաննու Աւետարանին մէջ, որոնք խորհրդանշական իմաստ կը ներկայացնեն.

ա. Կանայի հարսնիքին, Յիսուս ջուրը գինիի կը փոխակերպէ: Ջուրին այս փոփոխումը, թէեւ հարսնիքի ուրախութեան համար կիրարկուեցաւ, բայց իր մէջ կը կրէ նաեւ ներիմաստ խորք: Յաւերժաւանդ Խորհուրդ՝ Յիսուս բաջագործութեան սիրոյն չի գործեց այս հրաշքը: Ինչպէս տիեզերք (երեւցած՝ նիւթական աշխարհը) համօրէն կը խորհրդանշէ հոգեւորը: Ջուրին

գինիի կերպարանափոխուիլը՝ այլափոխումն է ջուր-Օրէնքին դէպի Աւետարա՛ն-գինիի:

բ. Իշխանազունին բժշկութիւնը--Դ.46-54: Այս հրաշքով Յիսուս Քրիստոս կը յայտնէ Իր կենդանարար առաքելութիւնը և մեղքերու թողութեան իշխանութիւնը:

գ. 38 տարուայ անդամալոյծին բժշկութիւնը Երուսաղէմի Պրոբատիկէի աւազանին մէջ--Ե.1-9: Ան կը ներկայացնէ Օրէնք ու կանոնագրութիւնը որ չէին կրցած ներել և բժշկել 38 տարուան մեղաւոր մը:

դ. Հացի բազմացումը: Յիսուս կը կերակրէ հինգ հազարը, հինգ նկանակով և երկու ձուկով--Զ.1-15: Կը խորհրդանշէ թէ Յիսուս՝ Ի՛նքն է ճշմարիտ հացը՝ երկնային Մանանան:

Ե. Ի ծնէ կոյրին բժշկութիւնը--Թ.1-12: Երկնառաք Գալիլեացի Մարգարէն բժշկելով ի ծնէ կոյրը, կապացուցանէ «Կեանքը Անով էր: Եւ կեանքը լոյս էր մարդոց»--Ա.4:

զ. Ղազարոսի յարութիւնը--ԺԱ.1-44: Լուսահանդերձ Աստուածորդին, Իր բարեկամ մահացած Ղազարոսին յարութիւն կու տայ Իր խաչելութենէն 8 օր առաջ որպէս մարգարէաշունչ նախաշաւիղ Իր փառապանծ Յարութեան:

Վերոյիշեալ հրաշաստեղծ իրադարձութիւններն ու անոնց ընթացքը կը ներկայացնեն և կը հիւսեն չորրորդ Աւետարանի խորարմատ կամարներն ու երկնասլաց յատկանշական խորհուրդները: Ոգեկան ներհայեցողութեամբ կարդանք և աղօթքի հոգիով նայինք առաքելաւանդ այս գրութեանց, որ կարենանք տեսնել և իւրացնել Անոր բնիւջ խորհուրդները մեր ամենօրեայ կեանքին մէջ:

Ալպէր Նորատունկեան
Թորոնթօ, Գանատա

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

Բանին յաւիտենական ծնունդը

1. ***"Սկիզբէն էր Բանը"--Ա.1***

Առաքեալը չ'ըսեր ***ա՛նսկիզբ,*** այլ՝ սկիզբ մը կը սահմանէ որ կը նշանակէ *սկզբնառաջին*՝ծագում, "Մնունդ և ոչ արարած" ըստ Նիկիական Հաւատամքի--"Եւ ՛ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին՝ այսինքն յէութենէ Հօր: Աստուած յաստուծոյ, լոյս ՛ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծո՛յ ճշմարտէ, *ծնունդ և ոչ արարած*":

"Բան" կը նշանակէ մտաւոր կարողութիւն՝ ճանչնալու, դատելու, և կշռելու, առաւել՝ խոհականութիւն, իմացականութիւն և իմաստութիւն. մտայղացում գաղափարներու և խորհուրդներու:

Սուրբ Աւետարանիչը արձագանքէն կը սլանայ տիեզերքը խորհրդանշող Հոգիին ներիմաստ խորքը, որպէսզի բացատրէ Հօր Աստուծոյ անբնին ու անթարգմանելի "ծնունդ" Որդին:

Հոգեղենէ ներտրամադրեալ է Բանը: Հիմն է Ան բոլոր արտաբին երեւցածներու: "Բան"ը ոչ թէ միայն խօսք է բերնով արտասանուած, այլ՝ ոգեկան ներհայեցողութեան մտածումը: Արդարեւ, Միածին Յիսուս՝ հարազատ ծնունդն է Աստուծոյ անբնին մտքին ու խորհուրդներուն: Այս պատճառա՛ւ Յիսուս Քրիստոս կը կոչուի "Բանն Աստուծոյ":

Բանն Աստուծոյ որ ծնունդ կ'առնէ աստուածային մտայղացումով և Անոր քարի կամքով, կը կոչուի Միածին ու կը դառնայ տիեզերքի ստեղծագործ Ճարտարապետը:

Միածին Ճարտարապետ Յիսուս, ժամանակաւորապէս թողելով Աստուածային գոյացութիւնը, մարդացաւ, ***"մարմին եղեւ",*** և մեր մէջ (մարդկութեան մէջ) բնակեցաւ որպէս ծիածանող յաւերժաբոյր Ճշմարտութիւն: Ան ըսաւ. "Յաւիտենական կեանքը այս է՝ որ ճանչնան Քեզ միակ Ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս Քրիստոսը, զոր Դուն ղրկեցիր"--Յով. ԺԷ.3:

2. *"Կեանքը անով էր, և կեանքը լոյս էր մարդոց"--Ա.4:*

Աստուածակերպար կեանքը ինքնագիտակցութիւն և իրազեկութիւն կը պահանջէ, այլապէս անթերի և լման մարդկային կեանքէ կը պակսի:

Բուսականութիւնն ու կենդանական կեանքը առանց ինքնագիտակցութեան և ինքնուրոյն "ես"ի, գոյացութիւն մըն է:

3. *"Կեանքը լոյս էր"*:

Բացատրութիւնը կ'ակնարկէ Յիսուս Քրիստոսի գոհաբերութեան և ծառայութեան: Ինչպէս լոյսը ինքզինք սպառելո՛վ օգտակար կ'ըլլայ մարդոց, նոյնպէս Յիսուս Քրիստոս ինքզինք նուիրելո՛վ դարձաւ Փրկիչը մարդ-աշխարհի: Նոյնպէս աշխարհի մարդոց այն մասը որ չի տենչար ճգտիլ աստուածանմանութեան և կը գոհանայ մնալ հոգեմտաւոր խաւարի մէջ, չի կրնար ճանչնալ ոչ Յիսուս Քրիստոսը և ոչ ալ զԱստուած: Համապիւռ տիեզերքին և անոր մանրակերտ մարդկային հասատարած խորհուրդին մէջ ալ, Յիսուս Քրիստոս որպէս Լուսաջահ Իր ծառագայթներով կողողէ մարդկային խոհականութիւնը, իմացականութիւնը և գիտակցութիւնը: Մարդ-արարած ի՛նչ ընելու է այն հաւատքի ոստումը ղէպի Լոյս Կեանքին, որ զինք պիտի լուսաւորէ: Աստուածային Լոյսը իրեն պիտի շնորհէ յաւիտենական կեանք, այլապէս իր խաւարը զինք ի վերջոյ պիտի մահացնէ:

Ի՜նչ անձնուրացութիւն և խոնարհութիւն, մէկու մը համար որ կրնայ դաւանիլ և յայտարարել, "Ես Այն ակնկալուած Լոյսը չեմ": Սպասուած և յուսադրիչ Լոյսը այնքա՜ն վեհ ու գերըմբռնելի է, որ Յովհաննէս Մկրտիչ կը գոհանայ ըլլալ միայն "վկան և խօսնակը" այդ Լոյսին: Վկայ ըլլալ՝ կ'ապացուցանէ *տեսած և ճանչցած* ըլլալ Լոյս Իրականութիւնը և Լուսեղէն Իսկութիւնը:

4. *"...Ջմարիտ Լոյսը որ կը լուսաւորէ ամէն մարդ"*--Ա.9

Լուսաւորել, երկրորդ անձի մը անպատճառ լուսաւորուիլը չի փաստեր: Աստուծոյ Միածին Մարդեղեալը կը լուսաւորէ ամէ՛ն մարդ: Սակայն երբ երկու առարկաներ--քար և սպունգ--ջուրը նետես, մէկը կը խխմի մինչեւ ծուծը իսկ միւսը միայն կը խոնաւնայ: Նմանապէս մարդկային իմացական կարծրութիւնն ու անհաւատութեան նախապաշարումը չեն թոյլատրեր որ մարդկային հոգւոյն ներքնամասը՝ գիտակցութեան ներքին առանձնարանը լուսաւորուի: Որովհետեւ ճշմարիտ Լոյսը կը թափանցէ մարդկային անձնիլթական ու հոգեղէն խորհուրդը, եթէ ենթական **ի՛նք** *կամենայ*:

Մարդկային անփախչելի ճակատագիրը մեռնիլ է: Այս չի նշանակեր նախասահմանուած պատիժ մը, այլ՝ եթէ ենթական մեր- ժէ՛ կեանքի պարգեւը, կ'ենթարկուի իրեն սահմանուած ժամանակա-ւորութեան, որ է բնական մահ:

5. *"Ընդ Աստուծոյ Որդիներ"*--Ա.1:

Աստուած Որդին մարդացաւ ու Մարմնացաւ որպէսզի մարդոց որդիները աստուածացնէ: Մարդ-արարած որ հպարտ կ'զգայ ինքզինք որպէս եռատարած

(three dimensional) արարած՝ առիթ ունի ըլլալու աւելի՛ բարձր և խոր, այն տարածական իմաստով, որ աստուածային է:

Վերոյիշեալ համարը աստուածայայտչական դիտանկիւն մըն է անդրադարձնելու մարդ էակը թէ իր ստեղծագործութիւնը չէ լրացած, այլ՝ մարդ դէպի կատարելութեան ընթացքի, գնացք մը կը բոլորէ մինչեւ որ հասնի արարչագործութեան կատարը, այսինքն ինքն ալ դառնայ Աստուծոյ որդի--փոխ "ո"-ով:

6. *"Եւ Բանը մարմին եղաւ"*--Ա.14:

Վաղ անցեալի ու ներկայի կարգ մը կարծեցեալ Քրիստոնեաներ տակաւին կը հաւատան, որ "մարմնաւոր" մարդը ի՛նք իր հոգեկան արքութեամբ ու բանական իմաստութեամբ ներամփոփման պահու մը ընթացքին, աստուածային հոգի կ՛ստանայ

Այսինքն:

Փոխանակ Աստուծոյ Միածինը մարդեղանալու, արբակենցաղ մարդ արարած մը ի՛նք աստուածացաւ ու դարձաւ Յիսուս Քրիստոս: Կան նաեւ ոմանք որոնք մարմնականը այնքա՞ն վատ և մեղանչական կը նկատեն, որ չեն կրնար ըմբռնել թէ Բանն Աստուծոյ ինչպէ՞ս կրնայ "մարմին" ըլլալ, ու կը գոհանան ըսելով, որ Յիսուս միայն մարմին *առաւ*" փոխանակ ըսելու "եղաւ"-ի: Վերոյիշեալ աղանդաւորները կը կոչուէին "կնոստիկեաններ":

7. *"Ընորհն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան"*--Ա.17:

Հին Կտակարանի կրօնական հասկացողութիւնը, Մովսիսական Օրէնքի պարտադրութեամբն էր: Յիսուս Քրիստոս յեղաշրջեց այդ դարաշրջանը որպէսզի մարդիկ ականատես ըլլան աստուածային ջնորհիին և ճշմարտութեան: Յիսուս Իր Մարդեղութեան շրջանին ակնարկեց Հին Կտակարնին, ըսելով. *«Օրէնքն ու մարգարէները մինչեւ Յովհաննէ՛ս գոյութիւն ունէին. անկէ յետոյ կը քարոզուի Աստուծոյ արքայութիւնը»*--Ղուկ. ԺԶ.16: Յիսուս ներկայացուց զԱստուած որպէս սիրող և կարեկից Հայր և ոչ որպէս *վրէժխնդիր Դատաւոր*: Ոչ թէ պահանջատէր մը, այլ՝ բարեգութ, ողորմած և հոգեկան ցնծութեան հիւրընկալողը:

8. *"Ես անապատին մէջ կանչողին ձայնն եմ"*--Ա.23:

Փարիսեցիք հարցուցին Յովհաննէս Մկրտիչին, ըսելով. "Դուն ի՞նչ կ՛ըսես քու մասիդ": Ան ամենայն խոնարհութեամբ պատասխանեց թէ ինքը միայն "Ձայնն" է անապատին մէջ Կանչողին: Ահաւասիկ ճշմարիտ աջակերտ ու հաւատարիմ հետեւող մը առանց փառասիրական ակնկալութեան:

"Անապատին մէջ Կանչողը"՝ Յիսուս Ինքն է: Ան կը կանչէ մարդկութիւնը հոգեկա՛ն անապատին մէջ, անհերկուա՛ծ իմացական աշխարհի մէջ

ու նախապաշարուա՛ծ ամուլ և մտախոհ խորհուրդներու բարանձաւներու մէջ: Ահա խիզախ ու բաջակորով Յիսուս, որ յուսահատիլ չի գիտեր և անսպառ սիրով ու աննահանջ ոգիով կը կանչէ Իր կորսուած գառնուկները: Կուզե՞ս դուն եւս ճանչնա՛լ և հետեւիլ Անոր:

9. *"Ձեր մէջ կայ մէկը, զոր դուք չէք ճանչնար"*--Ա.27:

Ի՞նչ սոսկալի և ահաւոր կացութիւն, երբ գիտակցութիւնը սթափի և անդրադառնայ թէ այլեւս ուշ է իր թաքուն ուժերուն աջակցութիւնը:

Անցեալին, Յիսուս մարմնապէս ներկայ եղաւ ժողովուրդներու ընկերակցութեան մէջ, սակայն Զինք չի ճանչցան: Այսօր Ան ներկայ է մեզմէ իւրաքանչիւրին անձնաւորութեան և ինքնութեան մէջ: Որքա՞ն ախորժելի է Իր ներկայութիւնը մեր մէջ: Այն "Անհատականութիւն"ը որ ունինք՝ հողածին կամ կաւաշէն իսկութիւն մը չէ մեզ նման, այլ աստուածային շնորհ և պարգեւ մըն է: Բոլոր կենդանական աշխարհի մէջ միայն մարդն է որ ունի ***անձնաւորութիւն*** և ինքնութիւն: Այս ինքնութիւնը մարդ-արարած ստացած է իր Արարիչէն: Յիսուս մէջն է մեր ինքնութեան, "որ մենք չենք գիտեր". մեզ աստուածկերպար ընող Շունչը՝ այն Կայծը որուն միջոցով կրնանք ըսել "ես ինքս եմ" կամ "ես այսինչն եմ": Այդ կա՛յծը Յիսուսի լուսեղէն Ներկայութիւնն է մեր մէջ:

10. *"Դուն պիտի կոչուիս Կեփաս"* ըսաւ Յիսուս Պետրոսի--Ա.42:

Յիսուս ի՞նչ կոչած է քեզ: Աստուծոյ համար ո՞վ ես դուն: Թի՞ւ մը, թէ յաւերժաւանդ անո՛ւն՝ անձնաւորութիւն:

11. *"Կարելի՞ բան է որ Նազարէթէն ոեւէ լաւ բան ելլէ"*--Ա.46:

Յիսուս՝ անկարելին կարելի Ընողն է: Մարդ արարած, ընդհանրապէս ժխտական կը մտածէ: Մարդիկ կասկածոտ են, դիւրաւ չեն հաւատար, կ'ուզեն ապացոյց մը տեսնել: Սակայն, Յիսուս ***հաւա՛տ*** տեսնել կ'ուզէ մեր մէջ:

12. *"Ահա...Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ"*--Ա.47:

Յիսուս եկաւ ոչ միայն փնտռելու կորսուածները, այլ՝ նաեւ հաւաքելու գոհարանման արժէքաւոր և աննենգ անձերը, մանաւանդ Հրէայ ազգին մէջէն: Որովհետեւ անոնց նախահայրը Յակոբ՝ խաբած էր իր հարազատ եղբայրը և նենգութեամբ յափշտակած իր հօր օրհնութիւնը:

Նաթանայէլ Առաբեալ՝ Հայ Ազգին կողմէ ճանչցուած է որպէս Սուրբ Բարթողիմէոս Առաբեալ և *Լուսաւորչի* Յիսուսի Մեսիա ըլլալուն: Ս. Նաթանայէլ նահատակուած է Սանտրուկ թագաւորի հրամանաւ մորթազերծ մահուամբ: "Բարդողիմէոսի Հայոց առաբեալ ըլլալուն, և Հայաստանի մէջ նահատակուելուն պատմութիւնը ընհանուր է բոլոր Քրիստոնեայ Եկեղեցիներու մէջ"-Ազգապատում էջ 27:

13. ***"Պիտի անանձնէ երկինքը բացուած"***--**Ա.51**:

Մարդոց լեզուն երբ բացուի՝ անոնք կ'ըլլան ճարտասան, միտքերնին երբ բացուի՝ կ'ըլլան բանաստեղծ և ստեղծագործ: Ռուէէ ապրանքի ջուկան երբ բացուի՝ վաճառականները կ'ըլլան մեծահարուստ: Գոլոմպոս երբ Ամերիկայի ճամբան բացաւ, բոլոր Եւրոպա խուժեց արեւմուտք: Ինչե՞ր կարելի է ընել երբ Յիսուս բանայ երկինքը մեզ համար: Ասպարէզ ու հրապարակ բոլոր հաւատացեալներու որ ունին Նաթանայէլ առաքեալի հոգին:

ԳԼՈՒԽ Բ.

Կանայի հարսանիքը

14. ***"Հարսանիքին հրաւիրուած էր նաեւ Յիսուս"***--**Բ.2**:

Մեզմէ քանինե՞ր կը հրաւիրեն Յիսուսը հարսանիքի, խրախճանքի, երգի և պարի: Կը հրաւիրենք Յիսուսը հիւանդի սնարին, կը հրաւիրենք Զինք երբ փորձանքի հանդիպած ենք: Կը հրաւիրենք Զինք մեր եկեղեցիներուն և աղօթավայրերուն: Ինչո՞ւ չհրաւիրել Յիսուս նաեւ մեր ուրախութիւններուն:

Զմռնանք որ ճշմարիտ ուրախութեան ազդակ գինին, Ինք օրհնեց և առատացուց:

Կեանքի ուրախութիւնը, զուարճութիւնը Յիսուս Ինքն է: Յիսուս չի խամրեցներ ցնծութիւնը, այլ՝ կը խանդավառէ զայն: Հրաւիրենք զԱյն խաբանելու չարը, փոխելու խաւարը լոյսի, տրտմութիւնը ուրախութեան: Ոչ մէկ կրօնքի և ոչ մէկ գրականութեան մէջ հոգեկան ուրախութիւնը այսքան ակներեւ է ու խօսուն, որքան Քրիստոնէութեան մէջ:

15. *"Իմ Հօրս Տունը վաճառատուն մի՛ վերածէք"* --Բ.16: Քարէ ու մարմարէ կառուցուածք մը երբ Յիսուս ***"Իմ Հօրս Տունը"*** կ'անուանէ և կը սրբագործէ, ո՞ւր ենք մենք որպէս աստուածակերտ էակներ: Ի՞նչ կ'ընենք մեր մարմիններուն մէջ: Ի՞նչ խորհուրդներ ու դաւեր կ'որոճանք ու կ'որոնենք: Միթէ մենք ալ Աստուծոյ տաճարները չե՞նք:

16. ***"Բայց Յիսուս Ինքզինքը չէր վստահեր անոնց"***--**Բ.24**:

Ի՞նչ ցաւալի պարագայ, Յիսուս վստահութիւն չունի կարգ մը մարդոց: Ոչ թէ անհաւատներուն, այլ Իրեն հաւատացողներո՛ւն իսկ: Ուրո՞նց դասակարգին կը պատկանինք մենք: Ան չէր վստահեր, ոչ թէ անոնց *կարողութեան*, այլ անոնց ***հաւատարմութեան*** և պարկեշտութեան:

ԳԼՈՒԽ Գ.

Յիսուս և Նիկոդեմոս

17.- *Գիշերով եկաւ Յիսուսի մօ՛*--Գ.2:

Նիկոդեմոս թէեւ ակիզբը գիշերո՛վ եկաւ, սակայն խաչելութեան օրը, ամենաճակատագրական պահուն, վտանգեց թէ՛ իր կեանքը և թէ իր դիրքը որպէսզի թաղէ Վարդապետ Յիսուսը: Նախընտրելի է մուկի նման ակսիլ և առիւծի նման վերջացնել:

18. *«Լաւ գիացիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»*--3:

"Տեսնել Աստուծոյ Թագաւորութիւնը" կը նշանակէ ***ըմբռնել*** Յիսուսի պատգամած ***Նոր Ուխտարանը:*** Յիսուսի բարոզած Աւետարանը, Մովսէսի տուած Օրէնքը չէ, այլ "Նոր Պատուիրան" մը: Այս գերադաս պատգամը ըմբռնելու համար, բաւարար չէր Հին Կտակարանի ուսուցումը: Հետեւաբար Յիսուս կ'ըսէ Նիկոդէմոսին. «եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ Արքայութիւնը», որ ըսել է՝ չի՛ կրնար ըմբռնել: Սոյն պատճառաւ Նիկոդէմոս չի կրցաւ հասկնալ Յիսուսի պատուէրը:

Քրիստոնէութիւնը ո՛չ թէ անունով, կամ ջարժուձեւերով, այլ համոզումով և ապրումով փոխարկում մըն է Մովսէսի Օրէնքէն:

Քրիստոնէութիւնը աննպատակ ճամբայ մը չէ՛: Ձիրար հերթող դրութիւններով կազմուած իմաստասիրութիւն մը չէ՛, մարդկային օրէնքներու կամ սկզբունքներու հաւաքածոյ մը չէ՛: Մարդկային իմաստասիրութիւնը *կ'ողոնէ* ճշմարտութիւնը, բայց ***չի կրնար գտնել*** զայն: Քրիստոնէութիւնը վարկած մը չէ՛, այլ ***աստուածայա՛յ*** ճշմարտութիւն: Յիսուս ըսաւ. *«Ոչ ոք կը ճանչնայ Որդին, եթէ ոչ՝ Հայրը, ու ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդին, **և ան՝ որուն ուզէ յայտնել Որդին»***--Մատթ.ԺԱ.27:

Քրիստոնէութիւնը՝ ճանապա՛րհ և կեանք մըն է, Քրիստոսի՛ միջոցաւ և Քրիստոսի՛ մէջ: Արուեստն ու գիտութիւնը չեն բաւեր, անհրաժեշտ է ***հաւա՛տքը՝*** անտեսանելի զօրութիւնը: Քրիստոնեան այն անձն է՝ որ կը ջնջէ իր անձը՝ եսասիրութիւնը, փառատենչութիւնը, և կ'աշխատի իր ընկերոջ բարիքին ու Աստուծոյ փառքին համար:

Ըստ Պղատոնի, բանաստեղծը Աստուծմէ ներշնչուած մարդն է: Հանճարը՝ Աստուծոյ յանկարծական յայտնութիւնն է մարդկային իմացականութեան մէջ, ըստ Արիստոտելի: Մարդկային իմացականութիւնը՝ բնարն է Աստուծոյ Աստուածաշնչական պտկերին: Մարդը, գիրքերու գիրքին մէջ, երգիչն է, որ իր ներշնչումը կ'ստանայ Աստուծմէ:

Առանց այդ գերբնական ներշնչման, մարդ հաւարակ էակ մըն է, գրեթէ հաւասար անբան անասուններուն: Այս իրողութիւնը լաւ իմացած էին հեթանոսները, աւելի լաւ քան այսօրուան թեթեւամիտ քրիստոնեաները՝

անունով միայն կամ ջարժուձեւերով բրիստոնեաները:

Կարգ մը "հեթանոս"ներ աւելի բրիստոնեայ էին, բան այսօրուան "բրիստոնեայ" կոչուածներ: Կարգ մը "բրիստոնեաներ", այսօր, աւելի հեթանոս են, բան երբեմնի հեթանոսները:

18. *"Դուն մի՛ զարմանար"*--Գ.7:

Բոլոր անոնք որ կը մօտենան Յիսուսի, անպայման կ՛ապշին ու կը զարմանան: Որովհետեւ Յիսուս զարտուղի ըլլալ կը թուի մարդկութեան: Ոչ թէ Յիսուս Ի՛նք տարակարծ (paradox) մըն է, այլ մարդ-արարած ի՛նք թերի է ու անկատար, հասկնալու Յիսուսը:

19. *"Ինչպէ՞ս կրնայ ըլլալ այդ"*--Գ.10:

Զարմանքն ու ապշութիւնը պիտի ջարունակուին: Մինչեւ "երկինք չբացուի" մեզի, ու մենք չհասնինք այն հաւատքի տարածութեան (dimension)-ի, ապշահար ու շուարած պիտի մնանք: Երբ "բացուի երկինք"ը մեր աչքերուն՝ մեր զարմանքը պիտի դառնայ հիացմունք և զմայլում:

**20. *"Քանի որ չհաւատաց Աստուծոյ Միածին Որդիին անունին"*
--Գ.18:**

Մարդ-արարածին մահանալը՝ ոչ թէ "սկզբնական մեղքին" պատճառաւ է, ինչպէս կը կարծուի, այլ՝ աստուածային կեանքի ջնո՛րհը *մերժելու* համար: Մարդ արարած կը մեռնի, ոչ թէ Ադամի՛ն գործած յանցանքին համար, այլ՝ որովհետեւ մարդ՝ յաւիտենական կեանքի իրաւունքով չէր ստեղծուած: Յաւիտենական կեանքը *երկրորդակա՛ն* պարգեւ մըն է տրուած մարդկութեան որ կը յայտնաբերէ Հօր Աստուծոյ բարեգութ սէրը:

Մեռնելու սահմանուած մարդկութեան, Աստուած կը ջնորհէ առիթ մը որ ստանան յաւիտենական կեանք: Եթէ անձ մը ի՛նք չուզէ ստանալ այս յաւիտենական կեանքը, ինք "արդէն իսկ դատապարտուած է մեռնելու": Ոչ թէ որպէս Ադամի մեղքին *պատիժ* այլ՝ մարդկային կեանքի ընթացքը ժամանակաւոր է:

"Յաւիտենական կեանքի" ա՛յս վերլուծական հատուածին մէջ, Յիսուս երբեք Ադամին մեղքը չյիշատակեր, այլ՝ աստուածային ձրի պարգեւ "յաւիտենական կեանք"ի ջնորհը կը յայտնաբանէ: Այս մեկնաբանութեան ապացոյցը, Յիսուս կու տայ Ե գլխուն 24րդ համարին մէջ, ըսելով. " *Ամէն անցա՛ծ կ՛ըլլայ մահէն դէպի կեանք*".

21. *"Ի վերուստ՝ երկինքէն ծրուած չէ այդ"*--Գ.27:

Հպարտանալու չեն մարդիկ իրենց տաղանդներով այլ զԱստուած փառաբանելու են, որովհետեւ մարդկային ձիրքերն ու արժանիքները՝ Աստուծմէ տրուած պարգեւներ են մարդոց *«Ի վերուստ»*.

ԳԼՈՒԽ Դ.

Սամարուհին

22. *Եթէ դուն գիտնայիր*'--Դ.11:

Ի՞նչ պատեհութիւններ կորսուած են մարդկային տգիտութեան և նախապաշարումի պատճառաւ:

1.--Եթէ դուն գիտնայիր պատահելիք:
2.--Եթէ գիտնայիր անցեալը:
3.--Եթէ գիտնայիր միջոցները:
4.--Եթէ գիտնայիր Միջնորդը:

ԳԼՈՒԽ Ե.

Յիսուս որկուած է Հօրմէն

23. *"Բայց ես աւելի մեծ վկայութիւն ունիմ, քան Յովհաննէսինը*'--Ե.36:

Յովհաննէս Մկրտիչ Հին Կտակարանի բոլոր մարգարէները գերազանցելով հանդերձ, իր վկայութիւնը չի հաւասարիր Յիսուսի վկայութիւններուն: Ուստի՝ ինչո՞ւ Յիսուսի խօսքերը չի նկատել որպէս գերագոյն աստուածայայտնութիւններ: Ինչո՞ւ համահաւասար նկատել Սուրբ Գրքի բոլոր գրութիւնները: Յիսուս հրամայական իշխանութեամբ ըսաւ. **"ըսուած էր ձեզի, բայց ԵՍ Կ'ԸՍԵՄ ՁԵԶ"**:

ԳԼՈՒԽ Զ.

Յիսուս կը քալէ ծովուն վրայ

24. *"Յիսուս դեռ իրենց մօտ չէր եկած*'--Զ.17:

Յիսուսի գալը կամ երեւումը նման է այգալոյսի որ կը ծագի բնական մեղմութեամբ, աստիճանաբար և քայլ առ քայլ: Կ'երեւնան նշաններ Հորիզոնին վրայ, բայց արշալոյսը չէ բացուած դեռ: Այս կը նշանակէ հաւատով սպասում աստուածային յայտնութեան--Արեգակն Արդարի: "Դեռ չէ եկած"--սպասում, աղերս և աղօթք:

25. *"Տեսան Յիսուսը...և զարհուրեցան*'--Զ.19:

Ինչո՞ւ, որովհետեւ, մարդկային ակնկալութիւնը իր մտապատկերին մէջ, տարբեր Յիսուս մը կը սպասէ տեսնել: Աշխարհ մարդակե՛րտ Յիսուս մը տեսնել կ'ուզէ, որպէսզի շարունակէ՛ իր կրապաշտութիւնը, մարմ-

նապաշտութիւնը, վայրագութիւնը և փառասիրութիւնը: Մարդկութիւնը չէ՛ որ կերպար մը պէտք է տայ Յիսուսի, այլ՝ մարդ ի՛նք պարտ է փոխակերպուիլ Յիսուսի կերպարին:

Աշակերտները փոխանակ հիանալու Յիսուսի ցոյց տուած գերբնական զօրութեան՝...սոսկացին ու զարհուրեցան Անկէ:

26. *"Ես եմ մի վախնար"*--Ղ.20:

Նոր Կտակարանի Աստուածայայտնութեան գլխաւոր շեշտը ***"Մի՛ վախնար"*** է: Իսկ Հին Կտակարանի պատուէրը ***"վախցի՛ր*** է": Մարդկութիւնը նոր դարաշրջանի մը մէջ մտաւ Յիսուսով ուր Աստուած դարձաւ կարեկից ու բարեգութ:

Նոր Կտակարանի կարճ մը **"ՄԻ ՎԱԽՆԱՔ"** ները.--

1."Սիրոյ մէջ վախ չկայ"--Ա. Յով. Դ.18
2. "Մի վախնար անոնցմէ որ մարմինը կ'սպանեն"--Մատ Ժ.28:
3. "Մի վախնար միայն հաւատայ"--Ղուկ. Ը.50:
4. "Մի վախնար պզտիկ հօտ"--Ղուկ. ԺԲ.32:
5. "Մի վախնար երբ կը լսէք պատերազմներ"--Ղուկ. ԻԱ.9:
6. "Սրտերնիդ չխռովի ու չվախնայ"--Յով. ԺԴ.27:
7. "Մի վախնար, Ես եմ Առաջինը ու Վերջինը"-- Յայտ. Ա.17:
8. "Ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ"-- Ա. Յով. Դ.18:

27. *"Գացէ՛ աշխատեցէ՛"*--Ղ.27:

Մարդ կը յառաջդիմէ միայն աշխատանքով ու ոչ կրաւորական լծացումով: Մարդ՝ ֆիզիքապէս առողջ կ'զգայ մարզանքով կամ մարմնական աշխատանքով: Նոյնն է նաեւ մտային աշխատանքը: Գերագոյն աշխատանքը՝ հոգեկա՛ն աշխատանքը նկատուելու է, որուն ծիրին ներքեւ կը գտնուի *հաւատալու* բարձրագոյն ձեռնարկն ու որոնումի խոյանքը: Այս աշխատանքը այն արարքն է որ կը կոչուի "ոստում դէպի անյայտութիւն": Ոչ որպէս անձնասպանութիւն, այլ՝ որպէս հոգեկան--գերագոյն--տեսանելիութեամբ նշմարուած իրականութիւն մը, որուն կը ջանայ թափանցել ենթական, ու իր հաստոյքեան միակ սանդուխը անծանօթ ոստումի և ոգեկան ալացքի մէջ կը գտնէ:

Անոնց համար որ *հաւատալը* աշխատանք չեն ուզեր տեսնել, Յիսուս կըսէ. *"Աստուծոյ գործը այս է՝ որ հաւատաք անոր, զոր Ինքը դրկած է"*--29:

28. *"Երկինքէն իջայ, ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ՝ կամքը Անոր, որ զիս դրկեց"*--Ղ.38:

Աստուած չի պահանջեր որ մենք մեր կամքը ուրանանք, այլ՝ Ինք որպէս տիեզերական ստեղծագործ քարի Առաջադրութիւն և Միտք, կը փափաքի Ինքզինք մասնակից ընել մեր կեանքի գործելակերպին:

Աստուած կը մաղթէ որ մենք մեր ազա՛տ կամքով տեսնենք Իր կամքին գերագոյն վեհութիւնը եւ արժանաւորութիւնը: Այս է միջոցը Աստուծոյ հետ գործակցելու եւ Իրեն նման ըլլալու:

29. *"Ես եմ կենաց հացը"*--Յ.49:

"Այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար"--Յ.52

Յիսուս Քրիստոս՝ որպէս կենարար հաց Իր մարմինը պիտի տայ ոչ որպէս խաւութիւն--Աստուած բռնատէր մը չէ՛ եւ ոչ ալ արիւնահեղ մը: Յիսուս Իր Մարմինը կու տայ աշխարհի, բեկանուելով, կարեկցելով, յոգնելով, անօթենալով, ծրտնելով, լալով եւ նոյնիսկ մեզ ազատագրելու ճանապարհի ընթացքին, մեռնելով: Ահաւասիկ՝ արտայայտութիւնն է աստուածային գերագոյն սիրոյն:

30. *"Ով որ կ'ուտէ իմ մարմինս և կ'ըմպէ իմ արիւնս՝ յաւիտենական կեանք ունի"*--Յ.55:

Յիսուս երբ դադրեցուց Իր խօսակցութիւնը Սամարացի կնոջ հետ, աշակերտները վերադարձան ու աղաչեցին Իրեն որ բան մը ուտէ: Յիսուս պատասխանեց անոնց ըսելով. *"Ես ուտելիք կերակուր մը զոր դուք չէք գիտեր"*. Աշակերտները չհասկցան Յիսուսի այս "կերակուր" խօսքը:

Յիսուս բացատրեց ըսելով. "Իմ կերակուրս այն է, որ ընեմ Հօրմէն Անոր որ զիս ղրկած է, և կատարեմ Անոր գործերը".

Նմանապէս՝ աննիւթական և հոգեղէն խորհուրդը որ Յիսուս կուզէ յայտնել վերոյիշեալ համարով, ոչ միայն Ս. Պատարագի հաղորդութիւնն է, այլ՝ գործե՛լ է Աստուծոյ գործերը և ի հարկին բեկանուի՛լ նման Յիսուս Քրիստոսի: Այս է Ս. Հաղորդութեան *"ըր հատատ"* ի խորհրդանշական իմաստը:

31. *'Ահիկա կը գայթակղեցնէ՞ ձեզ'*--Յ.62:

Աշակերտներուն համար՝ ուտել Յիսուսի մարմինը և խմել Անոր արիւնը, պիղծ մարդակերութիւն կը համարուէր: Այս պատճառաւ Յիսուս հարց կու տայ աշակերտներուն՝ ըսելով թէ գայթակղեցա՞ն:

Բոլոր անոնք որ, հազարամեակներու ընթացքին, գայթակղած են Յիսուսի խօսքերէն, անոնք սայթաքած ու չեղած են, որովհետեւ չեն հասկցած Յիսուսի պատգամներուն իմաստը: Չեն կամեցած հետազօտել Յիսուսի խօսքերը և յամառօրէն կառչած են իրենց մտացածին երեւակայութիւններուն:

Անկեղծ ու նուիրեալ անձի մը չգայթակղելու ու չի շփոթելու միակ միջոցը՝ տիրանալ է Նազովրեցի Վարդապետին դիտանկիւնը, որ ճեռք կը բերուի փորձառական սիրոյ և ներումի ապրումով:

32. *"Հոգին է կենդանարարը"*--Ց.64:

Յիսուսի վերոյիշեալ վկայութիւնը եթէ Իր նախորդ վկայութիւններէն անջատենք՝ ըմբռնելու դժուարութեան կը մատնուինք: Մանաւանդ երբ Ան կը յայտարարէ. *"Մարմինը ոչ մէկ բանի օգտակար է"*: Ան բացայայտօրէն կը ջանայ արժէքաւորել հոգին:

Մեզմէ շատեր ներկայ գտնուած են նուագահանդէսներու և քանաստեղծական ասմունքներու: Ոչ յաճախ, սակայն պատահած է որ արուեստագէտներ սպանեն երաժշտութեան կամ քանաստեղծութեան իմաստն ու խանդավառ ոգեւորութիւնը:

Միջազգային բայլերգներու մէջ, ամենաւոգեւորիչ երգեցողութիւնը՝ Ֆրանսական Յեղափոխութեան Մարսեյէզն է:

Յիսուս երբ կ'ըսէ, "Հոգի՛ն է կենդանարարը", բախտաւորութեան դրած կ'ըլլայ Իր խօսքերը՝ փարիսեցիներու խօսքերուն հետ: Այ՛ս է պատճառը երբ Ան կը շարունակէ ըսել, *"Ես խօսքը զոր ես ըսի ձեզի հոգի է և կեանք"*:

Երբ բաղդատենք մարգարէներու խօսքերը և Ս. Առաքեալներու հոգեշունչ գրութիւնները, այն ժամանակ կը ճանչնա՛նք որ անգերազանցելի են Յիսուսի արտասանած խօսքերուն հոգեկա՛ն որակի գօրութիւնը: Բանն Աստուծոյ խօսքերը "Հոգի և Կեանք" են որովհետեւ հպումն ունեցած են շողարձակ Զօրութեան:

Ստեղծագործող, բուժող ու ծննդագործող սերմեր կը պարունակեն անոնք իրենց մէջ: Այս է պատճառը որ Առաքելական և Կաթողիկէ Եկեղեցիներու մէջ, ուրկէ կը կանգնին հաւատացեալները Չորս Աւետարաններու ընթերցման պահուն:

33. *"Միթէ դուք ալ կ'ուզէք երթալ"*--Ց.68:

Նոյնիսկ Յիսուսի աշակերտներէն ոմանք, սկզբնական շրջանին, չի հասկցան իրենց աստուածառաք Վարդապետին ոգեպաշտ ու հոգեղէն գաղափարները: Որովհետեւ իրենց փնտռածն ու փաղձանքը՝ ժամանակաւորն ու ազգայինն էր (իրենց հայրենի՛քը): Յիսուս՝ յոգնած Իր բացատրական բարոզներէն և ընկճուած մարդկային նախապաշարումներու ծանրութենէն, երբ կը դիտէ Իր կարմ մը աշակերտներու Իրմէ բաժանումը, արտասուալոր աչքերը կը սեւեռէ 12-ին վրայ ու կ'ըսէ. *"Միթէ դուք ալ կ'ուզէք երթալ"*: *Դուք ալ Ձեր պիտի չէ՞ք: Մեր ատենները տարտամ աշխատանքն, նախորդումն և սէրը դուք ալ կուզէք ոտնակոխել:* Սիմոն Պետրոս, որպէս խօսնակը 12-ին՝ կ'ըսէ, *"Տէ՛ր, որո՞ւն պիտի երթանք: Դուն յաւիտենական կեանքի խօսքերը ունիս"*: Այսինքն, Քու խօսքերուդ մէջ "Հոգի և Կեանք" կայ:

ԳԼՈՒԽ Է.

Վէճ Յիսուսի անձին շուրջ

34. *"Ըր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ"*--է.36:

Վերոյիշեալ խօսքերը՝ Յիսուս ուղղեց այն օրուան օրինականներուն և կեղծ բարեպաշտներուն, ու ոչ 12-ին: Փարիսեցիներու և օրինականներու կրօնասիրութիւնը հայեցողական և ծիսական մարզանք էր միայն: Յիսուսի յայտարարութիւնը ըմբռնելու ճամբան մտային փաստարկութիւններով չ'իրականանար, այլ՝ բարոյական ու զոհողութեան ապրումով: Փարիսեցիներուն անզիջող անձնասիրութեան և փառասիրութեան պատճառաւ, Յիսուս ըսաւ անոնց. *"դուք չէք կրնար գալ"*:

35. *"Յիսուսի պատճառով պառակտում առաջացաւ"*--է.44:

Յիսուսի ներկայութեան՝ բարացած անշարժութիւններ շարժման մէջ կը դրուին: Յիսուսի մագնիսական Ներկայութիւնը որպէս Հով և Հոգի՝ դղրդիւններ և ցնցումներ կ'իրագործէ:

36. *"Քննէ՛ և տե՛ս որ Գալիլեայէն մարգարէ չ'ելլէր"*--է.52

Մարդիկ կ'ուզեն պարփակել Անբովանդակելին, շրջանակել Անծիրը և սահմանափակել Ամենակալը: Անձ մը Գերբնականը բնելու համար աննախապաշար միտքի և հոգետես հայեացքի կը կարօտի: Նաթանայէլ այս երկու յատկութիւնները չունէր: Սակայն ունէր անկեղծութիւն և բարոյականը ճանչնալու կորով: Ցգէտ էր, սակայն ոչ մոլեռանդ:

ԳԼՈՒԽ Ը.

Ընացող կինը

37. *"Արդ, Դուն այս մասին ի՞նչ կ'ըսես"*--Ը.5:

Մովսէս պատուիրած էր այսպիսիները բարկոծել և մեռցնել: Վերոյիշեալ հարցումը, որ թէպէտ դաւադրական ոգիով ուղղուած էր Յիսուսի, իր մէջ կը պարունակէ մարգարտարժէք արժանաւորութիւն: Երկու հազար տարիներ արձագանգող այս հարցումը, այսօր ալ անդրադարձնելու է մեզ, թէ ի՞նչ կ'ըսէ Յիսուս ներկայ դարու բաղաբական ու ընկերա-բարոյական հարցերուն:

38. *"Ես ալ չեմ դատապարտեր Ինձ"*, ըսաւ Յիսուս--Ը.11:

Այսպիսի առարկայական մեղքի մը, որուն համար Մովսէս մահ օրինաւորած էր, Յիսուս կ'ըսէ, *"Ես ալ չեմ դատապարտեր Ինձ"*: Յիսուս մեղաւորները դատապարտելու չէր եկած մարդաշխարհ, այլ՝ ազատագրելու զանոնք, որովհետեւ Ան կը սիրէ՛ր մարդկութիւնը:

Աստուածային գիտակցութեան մէջ, մեղաւոր մարդիկ չեն պատկանիր

հիւանդութեան մանրէներու դասակարգին զոր պէտք է նուաճել: Աստուածային դիտանկիւն հեռանակարը՝ մարդը ազատագրե՛լ է, ոչ յաղթահարել և մահացնել: *"Դուք ըստ մարմնի կը դատէք, ինչ ես ոչ ոք կը դատեմ"*.--կ՚ըսէ Յիսուս. Ը.14:

39. *"Գնա՛, ապաւինեա՛ մի՛ մեղանչէր"*--Ը.11:

Թէեւ Յիսուս չի՛ դատապարտեց մեղաւորը, սակայն նաեւ չ՚արտօնէր որ շարունակէ իր մեղաւոր ընթացքը: Այո, Յիսուս կը ճամբէ պռունիկը առանց դատապարտելու ըսելով անոր, "գնայ", սակայն նաեւ կ՚աւելցնէ, *"ապաւինեա՛ մի՛ մեղանչէր"*:

Յիսուսի կարեկցութիւնն ու սէրը չփոթելու չէ որպէս մեղանչելու արտօնագիր: Յիսուս չ՚ըսէր, "հոգ չէ գնայ" այլ՝ Ան ըսաւ. "գնայ, սակայն *մի՛ մեղանչէր*".

Յիսուսի քարեգութ և ողորմած խօսքերը՝ կենարար ազդեցութիւն կը գործեն մեղաւորներու կեանքերուն մէջ: Ծնական մղումներու անձնատուր այս կինը կը զղջայ, և վերանորոգ կեանքի մը տրամադրութիւններով կը հեռանայ Յիսուսի ոտքերէն:

40. *"Ես եմ աշխարհի Լոյսը"*--Ը.12:

Յիսուս լոյսի նետացոյց մը չէ, այլ՝ Ի՛նքն է լոյսի Իսկութիւնը: Յիսուս Լոյսն է գիտակցութեան և իմացականութեան, ոչ թէ տեսութեան մը: Ներմարմնային իրականութիւններու և ոգեղէն խորհուրդներու Լոյսն է Ան: Աննիւթական ու հոգեղէն խորհուրդներու ոլո՛րտը այգալոյսող Բանականութիւնն է Ան:

Աւետարանագիր Յովհաննէս սքանչացած է լուսաջող Վարդապետէն և յաճախ վկայութիւններ կը բերէ Լուսեղէն Յիսուսի խորհրդազգած խօսքերէն. կարդալ--Ա.4-5, 9, Գ.19-21, Թ.5, ԺԲ.35, 36,46, Ա. Յով. Ա.5:

Աննահանջ առաքեալներուն համար Յիսուս՝ յաւերժ Աստուած Որդին է պայծառակերպեալ: Աշակերտներուն ճանաչումը, ոչ թէ հայեցողական և մտացածին է, այլ շօշափելի և տեսանելի, այսինքն առարկայակա՛ն իրողութիւն:

41. *"Եթէ Ջիս գիտնայիք՝ Թերեւս պիտի գիտնայիք նաեւ Իմ Հայրս"*--Ը.19:

Կուզէ՞ք ճանչնալ Հա՛յր Աստուած: Նախ ճանչցէք Մարդեղացեալ Յիսուս Քրիստոսը: Միայն Հին Կտակարանի մարգարէութիւնները սերտել, Աստուած չի ճանչցներ: Յիսո՛ւս է հարազատ Թարգմանը Հայր Աստուծոյ: Յիսուսը խաչող Հրեայ կրօնաւորները զԱստուած ուսումնասիրած էին Հին Կտակարանի մարգարէներէն, սակայն չէին կրցած ճանչնալ զԱյն:

Աստուած ներկայացաւ և յայտնուեցաւ մարդկութեան Իր Միածնի՛

Մարդեղութեամբ, փորձառութեամբ և մարդոց հետ Իր ունեցած ընկերային յարաբերութեամբ, ու վերջապէս Իր անսպառ սիրոյ արտայայտութեամբ երբ խաչին վրայ ըսաւ.

«Հա՛յր ներէ՛ անոնց»:

42. *"Դուք պիտի փնտռէ՛ք Զիս ու պիտի մեռնիք ձեր մեղքերուն մէջ'*--Ը.21:

Որովհետեւ դուք ձեր հետազօտութիւնը անկեղծ սրտով չէք կատարեր, այլ՝ կուրացած նախապաշարումներով և փառասիրական ըմահաճութեամբ: Ռաբբունական աւանդութիւններու՛ մէջ տեսնել կ՛ուզէք Կենդանի Իրականութիւնը: Դուք պիտի ըլլաք յաւետենական դեգերած փնտռողներ նման օդագնաց մոլորեալ երկնաբարերու (meteorites) որոնք կը թաւալին միջոցին մէջ աննպատակ ու կորսուած:

Երկու այլաձեւակ Յիսուս փնտռողներ կան.

ա. Նման արեւելքի մոգերուն, որոնք գտան իրենց փնտռածը ու հաւատալով երկրպագեցին Անոր:

բ. Համանման մոգերու՝ հերովէս թագաւորն ալ փնտռեց Յիսուսը զինուորներու արիւնաթաթախ սուրերով:

գ. Արիւնահեղ փարիսեցիներն ու բահանայապետները փնտռեցին Յիսուսը, ոչ թէ աշակերտելու Իրեն, այլ սպաննելու Զայն:

Հարցը փնտռել չէ՛, այլ ի՞նչ ջարժառիթով կամ ի՞նչ նպատակի՛ համար կը փնտռես Գալիլեացի Մարգարէն:

43. *'Ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ'*--Ը.33:

Մարդկային ներունդին հոգեկան հիւանդութեան պատճառը եղած է սուտն ու խաբուսիկ նախապաշարումները: Մարդկութիւնը գերի եղած է պատրանքախաբ կարծիքներու, որովհետեւ մարդ կ՛ախորժի խաբկանքի ու կեղծիքի: Այլապէս սպառող հանրային գնորդներ, կեղծ գոհարեղէններ պիտի չգործածեն ու հանրութիւնը ծանուցանող հրատարակչութեան (advertisement)-ի կարեւորութիւն պիտի չտան:

Սատանայէն առեւանգուած պատանդներ, որոնք մոլորանքի մութ ճամբուն մէջն են, կազատագրուին մի միայն ճշմարտութեան լուսահեղ ճառագայթումով: Ճշմարտութեան զօրութիւնը իր լուսեղէն լուսարձակում-ներով ցոյց կու տայ մարդկութեան անոր ինքնութիւնը:

ԳԼՈՒԽ Թ.

Ի ԾՆԷ ԿՈՒՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

44. *"ՄԵՂՔԸ ՈՐՈ՞ՒՆՆ Է, ԱՍՏ՞ՐԻ ՔԷ ԻՐ ՀՕՐՆ ՈՒ ՄՕՐԸ'*--Թ.2:

Հին Կտակարանի տեսութեամբ ու Հրեաներու ընդհանուր կարծիքը այն էր, որ ֆիզիքական հիւանդութիւնները Աստուծմէ ղրկուած պատիժներ են:

Յիսուս կը ջանայ ուղղել այս խոտոր և անողորմ նախապաշարումը ըսելով. *"Ո՛չ ասոր մեղքն է և ո՛չ ալ իր հօրն ու մօրը, այլ որպէսզի Աստուծոյ գործերը յայտնի ըլլան ասոր վրայ".*

Յիսուսի բաղցրահայեաց տեսութեամբ, Մատանայի որեւէ մեբենայութիւնը, կարելի է դարձնել աստուածային փառաբանութեան:

45. *"ԿԱՒ ԳԱՅ ԳԻՇԵՐԸ, ԵՐԲ ՈՉ ՈՔ ԿՐՆԱՅ ԳՈՐԾԵԼ'*--Թ.4:

Այո՝ գալիս է այն մեծ գիշերը--խաւարն ու մթութիւնը ոչ թէ արեւին, այլ հոգեկան և իմացական գիշերը, երբ մարդիկ այնքա՜ն պիտի խորանան խաւարի ու աղամամութ տգիտութեան ու անաստուածութեան մէջ, որ պիտի կորսնցնեն իրենց ինքնութիւնը և դատողութիւնը: Անձնատուր պիտի ըլլան Մատանայի սադրանքներու ու մարմնական հեշտանքներու:

Ջոր օրինակ, մերօրեայ ցոփամոլ երաժշտութիւնը, ցանկասէր պարարուեստը և վաւաշոտ գեղանկարչութիւնները: Նաեւ, հազարաւոր խաբուածներու գահավիժումը դէպի անյայտութիւն:

46. *"ՔՐԱԿ ԳԵՏՆԻՆ Ե ԿԱԿ ՉԻՆԵՑ ԹՈՒՐՈՎ'*--Թ.6:

Չէ՞ որ մարդկային ծագումը հողեղէն է, նոյնպէս Յիսուս կաւ կը շինէ Իր թուրով: Իր էութենէն և իսկութիւնէն նշխար մը, բեկոր մը կ՛աւելցնէ հողէ շաղախին, տալու անոր բուժիչ յատկութիւն:

47. *"ՄԱՐԴ ՄԸ ՈՐՈՒՆ ՀԱՄԱՐ Կ՛ԸՍԵՆ ՔԷ ՅԻՍՈՒՍ Է'*--Թ.11:

Քեզի համար ո՞վ է Յիսուս: Ունէ՞ "մա՞րդ" մը, թէ Մարդեղեալ Աստուածորդին: Դուն կազմա՞ծ ես մտապատկեր մը Յիսուսի մասին: Քու հաւատքդ հիմնուած է հարեւանցի աւանդութիւններո՞ւ վրայ, թէ Յիսուսի կենսագործ փորձառութեան վրայ:

48. *"ՏԷ՛Ր, Ո՞Վ Է ԱՆ՝ ՈՐ ՀԱՒԱՏԱՄ ԱՆՈՐ'*--Թ.36:

Յիսուսի հարցումին. *«Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդիին»,* բժշկուող կոյրը կը պատասխանէ. «Տէր, ո՞վ է ան»: Անկեղծ և աննախապաշար որոնող հոգիի անխարդախ հարցումն է այդ: Յիսուս՝ Իր Ինքնութիւնը բացայայտօրէն կը յայտնէ այս կոյր ծնած մարդուն, ըսելով. *"Եւ տեսար Զայն, և Ան է որ կը խօսի հետդ":* Աստուածայայտնութիւնը ընորհ մը և պարգեւ մըն է անո՛նց, որոնք անկեղծօրէն կ՛ուզեն ճանչնալ

Ճշմարտութիւնը:

49. *"Երթէ կոյր ըլլայիր՝ մեղք չէիր ունենար"--Ք.41:*

Հոգիի կուրութեան դատապարտութիւնը: Մարդիկ կամայական կերպով, ըստ իրենց բմահաճոյքին համար կոյր կը ձեւանան: Կամապաշտօրէն կ'ուզեն յագեցնել իրենց մարդկային "ես"-ը, որ յաւերժօրէն անյագ է: "Ես"ը որքան ալ անհատական ինքնուրոյն անձնաւորութիւնը կը ներկայացնէ, իր ծայրահեղ և նեղ հայեացքով անձնական ջահի դիտում և բմահաճ ձգտում կ'ստանայ:

Մեր "ես"ը մեր ինքնութեան և անձնականութեան իսկութիւնը մեզի ջնորհուած աստուածային կայծն է: Աստուածային սոյն կայծը, մարդ կրնայ դարձնել նաեւ իր էութեան ու գոյատեւութեան թշնամին:

Եսամոլութիւնը քարոյական և ընկերային ախտ և հիւանդութիւն է: Կամայապաշտ եսամոլութիւնը հոգեկան և իմացական կուրութիւն է: Այսպիսի կուրութեան, Աստուած չի միջամտեր: Ենթական ի՛նք պարտաւոր է աստուածային բուժիչ ճառագայթին ենթարկել ինքզինքը:

Ինչպէ՞ս հաշտեցնել մարդկային ամբարտաւան "ես"ը, որ է՛ նաեւ աստուածային կայծ, ու կը զանազանէ մարդը անասուններէն: Մարդկային "ես"ը աստուածային կայծն է և իր գործառնութիւնները կրնայ կատարել *սիրոյ* և *խոհեմութեան* հանգամանքով և ոչ փառասիրութեան կամ բնաւորութեան համար:

Երբ անձ մը իր "ես"ը կը թեքի դէպի իր անձին ուղղութեամբ և միայն իր ջահերը կը փնտռէ և ոչ նաեւ իր եղբօրը, ան կը դառնայ աստուածընդդէմ: Կան անձեր որ անգիտակցօրէն ընբռստացած են Աստուծոյ դէմ, և կան նաեւ ըմբոստներ որ սատանային հաճելի՛ ըլլալու համար ապստամբած են ընդդէմ Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ժ.

Բարի Հովիւը

50. *"Ով որ դռնէն չի մտներ"--Ժ.1:*

Ի՞նչ է, Ո՞վ է այդ Դուռը: Ցրդ համարին մէջ, Յիսուս կ'ըսէ. *"Ես եմ դուռը"*: Ոչխարներու գաւիթը, ժողովուրդներու ընկերային գործունէութեան տարածքը, ծխական խորհուրդի կազմը, վարչական կազմակերպութեան գործառնութիւններու հրապարակը: Ընկերային աշխատանքի իրագործութիւնը՝ բնաբարում չի կրնար պարտադրել, ապա թէ ոչ, կը դառնայ բռնապետութիւն: Յիսուս՝ սիրո՛յ և ծառայութեան Դուռն է: Այս ճշմարտութեան ցցուն փորձառական ապացոյցը, Յիսուս յայտնեց Ի՛ր ապրումով և աղաչանքով և յաւերժօրէն դրոշմեց, Իր սիրոյ զոհողութեամբ՝ Գողգոթայի կատարին:

Ա՛յս ըլլալու է դուռը--սիրոյ գերագոյն զոհողութեան--որ պարտ է

իրագործուիլ եկեղեցիներու՝ Յիսուսը սիրողներու հաւատքին մէջ։

51. *"Անուններով կը կանչէ"*--ժ.3։

Ներկայ (social science)-ի գիտարուեստով, պետութիւնները իրենց բաղաքացիները թիւ-ով կը կանչեն։ Նոյնիսկ մեծ ընկերութիւններու պաշտօնեաներ իրենց *թիւերո՛վ* կը ճանչցուին ու ոչ անուններով։

52. *"Զին ճանչնար օտարներու ձայնը"*--ժ.5։

Յիսու՛ս է հաւատացեալներու Մինգահարը։ Անոր հոգեհմայ մեղեդին բուժիչ բալասան է և ոչ ռազմական բայլերգ դէպի մարդկային սպանդանոց։

Որքա՞ն ծանօթ է մեզի Յիսուսի Ձայնը։ Մեր ականջները ունի՞ն վարժութիւնը Յիսուսի Ձայնին, թէ օտարներու ձայնը աւելի հաճելի կը հնչէ մեր ականջներուն։

53. *"Ես եմ ոչխարներուն դուռը"*--ժ.8։

Ոչ թէ գայլերու դուռ մը, այլ *ոչխարներո՛ւ* դուռը։ Մարդկային ընկերութեան ներդաշնակ ապրումի հնարքը, Յիսուս կը նկարագրէ կենդանի գոյներով և հովուական կեանքէ առնուած պատկերներով։ Վիրգիլիոսի ընտիր հովուերգութիւնները, գրակա՛ն բանաստեղծութիւն են, որոնք կը յուզեն միայն միտքը և զուարճութիւն կը պատճառեն ընթերցողներուն։

Յիսուս որպէս վեհագոյն Քնարերգակ՝ Իր կեա՛նքն ու շու՛նչը գրաւ կը դնէ սոյն հովուական կենդանի և առարկայակա՛ն երաժըշտութեան։

54. *"Ես ենթայ որպէսզի կեանք ունենան և աւելի եւս ունենան"* կ՛ըսէ Յիսուս--ժ.10։

Կեանքի այլատեսակ մակարդակներ և աստիճաններ կան։ Բուսական, կենդանական և մանրէաբանական։ Մարդկային իմացական, զգացական և ըմբռնողական կեանքը, կը կարծուի ըլլալ վեհագոյն վիճակը որ աշխարհ երբեք տեսած ըլլայ։

Յիսուս Ինչպէ՞ս կրնայ աւելի գերադաս կամ առաւել կեանք մը տալ մարդոց։ Եթէ մարդկային կեանքը ըլլար բարձրագոյն ապրելակերպը մարդկային ընկերութեան մէջ, այսօր գոյութիւն պիտի չունենար ոճիր կամ պատերազմ։

Եթէ մարդկութիւնը կը խորհի որ մայր բնութեան ծնունդ տուած բարձրագոյն ստեղծագործութիւնը ներկա՛յ մարդ-արարածն է, չարաչար կը սխալի։

Յիսուս եկաւ աշխարհ որ հողաշէն մարդը հոգեղէնի՛ վերածէ, ժամանակաւոր կեանքը՝ յաւերժականի և ունայնամիտ պայքարն ու մաբառումը՝ ներդաշնակ մեղեդիի։

55. ***Իր կեանքը կու տայ ոչխարներուն համար***'--**Ժ.11**:

Ոչ թէ որպէս փոխարժէք կամ զենեալ Գառնուկ, այլ որպէս, պատնէշի վրայ, բաջ Հովիւ՝ ազատելու համար Ի՛ր սիրելի ոչխարները մահուան կապանքէն: Մահառումի ու պայքարի ընթացքին Ան ստանձնած էր զոհել նոյնիսկ Իր կեանքը: *"Իմ կեանքն կու տամ ոչխարներուն համար"*. ըսաւ Ան: Ոչ թէ որպէս մատաղ կամ կանխավճար, այլ պայքարի վճռական գոյամարտի մէջ *միտ՛չ* ոչխարը աւելի քան Իր Անձը:

56. ***"Ես ունիմ նաեւ ուրիշ ոչխարներ, որոնք այս գաւիթէն չեն***'--**Ժ.16**:

Համաշխարհային խոստում և համամարդկային եղբայրութեան մտայղացումը՝ **Յիսուսի Եկեղեցին է**:

Որքա՜ն յուսադրիչ և սրտապնդիչ է Գալիլեացի Հովիւին խորաթափանց սրատեսութիւնը: *"Ուրիշ ոչխարներ"* յայտարարութիւնը՝ Յիսուսի Եկեղեցիին խորհրդաւոր բանալին է: Վերոյիշեալ զեկոյցը խորհրդանշանական իմաստներով կ'ըմբռնուի:

Ու՞ր են *"ուրիշ ոչխարները"*: Որո՞նք են "ուրիշ ոչխարներ"ը Յիսուսի: Ինչպէս կարգ մը ոչխարներ իրարու հետ կը պայքարին փոխանակ դէմ դնելու գայլերուն, Եկեղեցական պատմութեան մէջ ալ սոյն անողոք և ամօթալի պայքարներ տեղի ունեցած են ու տակաւին կը շարունակուին, այնպէս ինչպէս հիւսիսային Իրլանտայի մէջ:

Ժամանակ է որ ճանչնա՛նք "ուրիշ ոչխար"ներու հօտերն ալ, եղբայրանա՛նք մեր հաւատակիցներուն և արեւնակիցներուն: "Ուրիշ ոչխար"ները ճանչնալու հոգի՛ն և գաղտնիքներու թափանցելու խիզախ խորացումը խնդրենք Մեծ Հովիւէն: Այն ատեն, փոխանակ ականատես ըլլալու պայքարի կայծերուն, պիտի իմանանք հոգեհմայ երաժշտութիւնը և համերաշխ երգեցողութիւնը օտար կարծուած ոչխարներուն:

Միասնական ճիգերը նախապայման են Յիսուսի Եկեղեցւոյ ծով կարիքներուն հասնելու համար: Տիեզերական ժողովներու ընթացքին, Եկեղեցւոյ հայրեր ջանք ըրին անձնականացնելու Քրիստոսի Հաւատքի Դաւանանքը ու Անոր փրկութիւնը, ու այդ բանակռիւի ընթացքին կորսնցուցին Քրիստոսի Եկեղեցիին միասնականութեան հոգին:

Միասնականութիւն եզրը, վերջերս ամենաջատ գործածուող բառերէն մէկն է: Նոյն յանկերգը կը լսուի ամենուրեք, ամէն մակարդակներու վրայ, բայց դժբախտաբար, կը մնայ ջրթնային սահմաններու մէջ, յանկերգային բացականչութիւններու ընթացքին, օդային խօսքերով սահմանափակուած:

Չկայ ժողովուրդ մը կամ հաւաքականութիւն մը, ոչ իսկ ընտանիք մը կամ նոյնիսկ երկու անձ, ուր գոյութիւն չունենայ գաղափարներու տարբերութիւն: Էականը, գոյութիւն ունեցող տարբերութիւններու հանդուրժողութիւնն է, այլամերժութենէ վեր բարձրանալով՝ տարբեր տեսակէտներու

փոխադարձ յարգանքն է, ու միակողմանի դիրքորոշումներ պարտադրելէ հեռանալն է, որ մեզ կ'ընէ Յիսուս Քրիստոսի աջակերտ:

Ճշմարիտ միութիւնը հաղորդակա՛ն միութիւնն է: Միրոյ մէջ եղած տարբերութիւնները միութիւնը աւելի տիեզերական կը դարձնեն: Առողջ հաւաքականութեան մը ուժը կը կերտուի եռանկիւնի ստորոտէն ու կը բարձրանայ մինչեւ գագաթի ղեկավարութիւնը, և ո՛չ հակառակ ուղղութեամբ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ղազարոսի Յարութիւնը

57. *'Այդ հիւանդութիւնը մահաբեր չէ'*--**ԺԱ.4**:

Մահը վերջնական դադարն է կեանքի բոլոր գործառնութիւններուն: Ղազարոսի մահը կեանքի գործունէութիւնները չկասեցուց, այլ՝ չորս օր վերջ աւելի խանդավառօրէն գործունէութեան սկսաւ ան:

Ղազարոսի հիւանդութիւնը վիշտ և տխրութիւն չպատճառեց, այլ՝ դարձաւ փառաբանութիւն առ Աստուած:

"Վասն Աստուծոյ փառին համար" է՝ Յիսուսի զրոյցը, ապացոյց է Աստուծոյ ամենակարողութեան: Մահը որ վախճա՛ն ճանչցուած էր դարեր շարունակ, աստուածառաք Մարգարէն, աստուածազօր խօսքով կը չէզոքացնէ ու կը յայտնաբերէ աստուածային գերհզօրութիւնը մահուան դէմ:

Առաքեալներու աւետարանչութիւնը կը սկսի ո՛չ թէ Քրիստոսի Ս. Մնունդով, այլ Անոր յաղթական Յարութեամբ: Յիսուսի Յարութիւնը լոյսի յաղթանակն է խաւարի վրայ, անմահութեան զօրութիւնն է մահուան վրայ, յաւերժական կեանքի իշխանութիւնն է մեռելութեան վրայ, սիրոյ յաղթանակն է ատելութեան վրայ, և բարութեան յաղթութիւնն է չարութեան վրայ:

58. *"Վարդապետը եկած է ու ձեզ կը կանչէ'*--**ԺԱ.28**:

Ոչ թէ ուրի՛շը կը կանչէ, այլ՝ ԲԵ՛Զ կը կանչէ Ան:

ա. **Մխիթարութեան**--Հաւատացեալը կանչուած է դառնալու ժողովուրդին խիղճը, ընկճուածներու պաշտպանը Աւետարանի յաւիտենական բարոզիչը և դժուարութեան ժամանակ մխիթարողը:

բ. **Ծառայութեան**--Ի՞նչ է եկեղեցիին իրականութիւնը--քաղա՞ք է, շէ՞նք, պետութի՞ւն, գո՞րծ: Եկեղեցիի մը իրականութիւնը ոգի՛ է, ըմբռնում, ապրում և ծառայութիւն: Եկեղեցին վառարանն է աշխատութեան և ծառայութեան: Քրիստոնեայ հաւատացեալի մը տնտեսութիւնը կը նշանակէ ծառայութիւն՝ իր ժամանակով, իր պարգեւներով, իր ստացուածքով և իր անձով--Ղուկ. ԺԲ. 42:

գ. **Բժշկութեան**--Յիսուսի գործունէութեան երեք կարեւոր երեսները՝ ա. կը *քարոզէր*, բ. *կ'ուսուցանէր*, գ. *կը բժշկէր*--Մատթ.Դ. 23:

Անճնաւորութիւն մը ի՞նչ ուժի որ յանճնէ ինքզինք, այդ զօրութիւնը կը վարէ ուղեղին ընթացքը:

1. Չարը հնարաւորութիւնը ունի վնասել ջղաբջիջները:
2. Բարին նոյնպէս հնարաւորութիւնը ունի բուժել ջղաբջիջները:
3. "հրաշք"ը Բարիին բուժիչ յատկութիւններն են որոնք կը վերանորոգեն ջղաբջիջները ու մարդ էակին անդամները կ'առողջանան:

դ. **Հաշտութեան**--Յիսուսի մահը փրկարա՛ր մահ է, հաշտեցնող մահ է, մահ մը որ վերջ կը դնէ մահուան:

Արեւելեան եկեղեցիներու՝ Բիւզանդիոնի, Անտիոքի, Աղեքսանդրիայի, Երուսաղէմի գժտութիւնը և իրարու միջեւ եղած պառակտումն ու նախանձը, Հռոմի եկեղեցին ակամայ դարձուցած էր հաշտարարի դերը խաղալ: Այս հաշտարարի դերը ի վերջոյ զինք դարձուց մեծաւոր եպիսկոպոս:

59. *'Յիսուս Արտասուեց'*--**ԺԱ.35**:

Յիսուս տեսութիւններ, սկզբունքներ և պատուիրաններ բարոզող Մարգարէ մը չէր, այլ մարդկային ամենօրեայ ապրումի հոգեմտաւոր տառապանքին ու ցաւը կրեց: Իր ապրումի փորձառութեամբ ու կարեկցութեամբ, հարազատ Թարգմանը եղաւ Աստուծոյ սիրոյն:

Իր լացը, եթէ պիտի դիտենք որպէս պարտութիւն մը, նոյնիսկ ա՛յդ պարտութիւնը Յիսուս փոխակերպեց յաղթութեան, որովհետեւ Իր լացին միջոցաւ Ան կարեկից դարձաւ մարդկային յուզումներուն, և Իր սիրոյ միստիկ զոհաբերութեան պարտութիւնը յաղթանակի փոխակերպեց:

Անո՛նք միայն կրնան ապրումն գործեր տալ, որոնք լացած ու տառապած են: Յիսուս լացաւ, ոչ թէ *ցաւէն* այլ *միւսէ՛ն*: Ան կ'ըսէ մեր բոլորին.

«Ինչո՞ւ կու լաս»:

Տիրամայրը փարած էր Յիսուսի արիւնոտ ոտքերուն լալահառաչ:

60. *'Այդ բաժակը մէկդի՛ դրէք'*--**ԺԱ.39**: Աստուած գործակցութիւն կը փնտռէ մարդ-արարածներէ: Ոչ թէ ստրկացնելու զանոնք, այլ՝ մարդկային կեանքին իմա՛ստ տալու համար:

Կենդանիները՝ իրենց շրթունքներով կը շօշափեն իրերը, թռչունները իրենց կտուցներով և մարդ իր ձեռքերովը: Յիսուս շօշափեց իր շուրջը հաւաքուած ժողովուրդին հաւատքը՝ Իր Հոգիով, և հրահանգեց որ բարը մէկդի ընեն:

Այն պատուարը որ կը բաժնէ մարդ-արարածը Յիսուսէ՝ ենթակային բմահաճ "ես"ն է, այդ "ես"ը ենթական ի՛նքզինքը մէկդի ընելու է, եթէ կը փափաքի վերակենդանանալ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յիսուս Բեթանիայի մէջ

61. *"Ինձ միշտ ձեզի հետ չունիք"*--ԺԲ.8:

Յիսուս Քրիստոսի ներկայութիւնը առիթ մը և պատեհութիւնը մըն է, մի՛ վատնէք, այլ օգտուեցէք և գործածեցէք Իր երեւումը: Մարդիկ շատ գեղեցիկ երազներ կը հիւսեն, սակայն այդ երազները գործադրութեան դնել կ՛ուզեն երբ գործէն հանգստեան կոչուին: Կը կարծեն որ իրենց երիտասարդութիւնն ու առողջութիւնը պիտի շարունակուի մինչեւ իրենց կեանքին վերջը: Նոյն սխալը կը գործեն նաեւ հաւատացեալները: Կը յետաձգեն իրենց աստուածատուր կոչումն ու առաքելութիւնը: Նոյն սխալը կը գործեն նաեւ ապաշխարել ուզողները:

Աստուածային ներշնչումն ու ներազդեցութիւնը, նոյն օրութեամբ չի ներկայանար համայն մարդկութեան: Հաւատքը առարկայական օրութեան մը ներշնչումն է, այն «միստիք» և գերբնական ուժին, որով մարդ կը հաղորդուի անջրպետին Տիրոջը հետ և կ՛ստանայ թելադրանքներ և ներշնչումներ:

62. *"Տէր, կ՛ուզենք Յիսուսը տեսնել"*--ԺԲ.21:

Ինչո՞ւ, որովհետեւ Յիսուս՝ ուժ, պայքար, խոյանք և կամք արտայայտող ու ներշնչող մարմնացեալ Ապրում է:

Յոյները ունէին Սոկրատը, Պղատոնը և Արիստոտելը: Այս երեք իմաստասէրները ճառեցին արդարութեան, սիրոյ և տիեզերական ներդաշնակութեան և օրինապահութեան ***տեսակ՛ն*** մարզը: Յիսուս բարոզեց ***փորձառական ու առարկայական ապրում՝ը,*** որուն կենդանի ապացոյցը տուաւ Իր կենցաղավարութեամբ:

Ջակէոս տեսնել ուզեց Յիսուս Մարգարէն: Մէկ անգամ տեսնելով Յիսուսը, ան բոլորովին փոխակերպուեցաւ ու դարձաւ նոր Ջակէոս մը:

63. *"Դուն որ կոչ գաս Տիրոջը Անունով"*--ԺԲ.13:

Մե՛նք ի՞նչ անունով և որո՞ւ անունով կը մօտենանք մարդոց: Գողգոթան միայն աշխարհագրական անուն մը չէ բարձունքի մը, այլ Քրիստոսի Արեամբ ու վկայութեամբ նուիրագործուած դէպք ու ցոլացումը Աստուծոյ սիրոյն: Մարդեղեալ Բան Աստուծոյին հանդիպող անձ մը կը ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Սիմոն Յովնանի որդին կ՛ըլլայ. "Պետրոս"՝ "Նոր ծնունդ" մը:

Յիսուս Քրիստոսի անուան գործածութիւնը ունի գերբնական զօրութիւն--Ա. Կորնթ. Ե.4, Կող. Գ.17: Արքազան անունը զօրութիւն է ինքնին, որուն, հաւատացեալ մը տեղի տալու է:

64. ***"Եթէ մէկը ինձի ծառայէ՝ իմ ետեւէս պէտք է գայ"***--**ԺԲ.26**:

Չի կայ դարձ կամ շեղում (detour): Յիսուսի Եկեղեցին ի՞նչ ցաւեր և վէրքեր ստացած է շեղելով իր Առաքելական Ժողովներ գումարեցին: Որո՞ւ կը հետեւէր Եկեղեցին երբ հայրապետներ Տիեզերական Ժողովներ գումարեցին: Որո՞ւ հետեւեցան խաչակիրները իրենց արկածախնդրութեան դարաշրջանին սիրող խաչեցեալի՞ն, թէ խաչգամողներուն: Ո՞վ էր Առաջնորդ Հովիւը միջնադարեան **Հաւատաբանութեան**: Դէպի ո՞ւր կ'ընթանայ մերօրեայ Եկեղեցին, դէպի ծանծաղամիտ ճահիճնե՞ր, թէ գահավէժ անատուածութեան կը թէքի:

Արիւնարբու բունութիւնը հրապուրած է Քրիստոնեայ կոչուած ազգերու ապականած խորհուրդը:

12 Աջակերտներ աւետարանչական արջալի ընթացքին, կը հանդիպին իրենցմէ զատ բարոզիչի մը, և սա տեղեկութիւնը կու տան Յիսուսի, "Վարդապե՛տ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր, բայց մեզի հետ չէր ըրջեր. և արգիլեցինք զայն": Աջակերտաց նոյն յանկերգը կ'երգէ Եկեղեցին երկու հազար տարիներէ ի վեր: Տեսնենք թէ Յիսուս ի՞նչ կը պատասխանէ աջակերտներուն: Յիսուսի հրամայական խօսքը. *"Մի՛ որ մեզի հակառակ չէ՝ մեր կողմն է"*. ***Ի՞նչ վտեմ արտայայտութիւն***:

Մահաթմա Կանտիի խաղաղ ցոյցերն ու ոչ-բունի քաղաքական գործունէութիւնն էր, որ ազատագրեց իր 700.000 միլիոն ազգակիցները: Մահաթմա Կանտին սորված էր Յիսուս Քրիստոսէ:

65. ***"Ես աշխարհի ենթայ իբրեւ Լոյս"***--**ԺԲ.46**:

Կեանք և հասկացողութիւն: Դրական և ոչ ժխտական: Լոյսը կը գործէ առանց բունանալու, առանց պայքարի, խաղաղութեամբ, լուսաւորելով, մաշելով և ինքզինք սպառելով: Դիտենք լուսավառ մոմ մը:

Առաքեալներու կեանքը եղաւ համակ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չկորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Քրիստոս: Մարդու յոգնած մարմինը կազդոյր կը փնտռէ, իսկ հոգին լոյս: Խաւարէն՝ լոյս, մահէն՝ կեանք, ապականութենէն անապականութիւն և անգիտութենէն դէպի ճշմարիտ գիտութիւն կը բալեն Յիսուսի հետեւողները:

66. ***"Ես չենթայ որ աշխարհը դատեմ...այլ փրկեմ"***--**ԺԲ.48**:

Որովհետեւ Յիսուս կը սիրէր Իր աշխարհը, Ի՛նք յօրինած էր զայն, Ի՛ր աշխատութեանը արդիւնքն էր աշխարհ: Որպէս Ճարտարապետ Ի՛ր մտայղացումն էր աշխարհ:

Հօր Աստուծոյ սէրը հանդէպ Իր Որդւոյն՝ պատուանդանն է տիեզերքին ու երաշխիքը մարդոց փրկութեան: Իրական բարոզութիւնը փրկութեան կոչն է, հրաւէրն է Աւետարանի բարի լուրին, և Աստուծոյ Արքայութեան: Մարդոց փրկութեան համար երկու պայմաններ կան.

ա. Անտուտ հաւատքով հաւատալ Աստուծոյ Միածին Որդիին:

ա. Անտուտ հաւատով հաւատալ Աստուծոյ Միածին Որդիին:
բ. Ապրիլ Անոր պատուէրներուն համաձայն, այսինքն՝ ապրիլ սիրոյ և ծառայութեան կեանքը:

67. *Ինչպէս որ Հայրը ըսաւ Ինծի՝*--ԺԲ.50:

Որմէ՞ կ՛առնենք մեր հրահանգները: Մեր "մեծ ես"-է՞ն, թէ Հա՛յր երկնաւորէն և Գոյի Իրականութենէն: Մեր մարմնի մղումներէ՞ն թէ զգաստ բանականութենէն: Մտքի մռայլ կուրութենէ՞ն, թէ խորհող ու տրամաբանող աստուածային Ճառագայթէն:

«Գերագոյն պատուիրանը **սէ՛րն** է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ և անկեղծ հաւատքէն քղխած սէրը» --Ա. Տիմ.Ա.5: « Շատեր այս պատուէրները մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ո՛չ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն», կ՛ըսէ Պօղոս առաքեալ --Ա. Տիմ. Ա.6:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ծառայութիւն

68. ***Իսպառ սիրեց՝*--ԺԳ.1:**

Դրականօրէն կապացուցանէ յաւերժութիւնը Արարչի սիրոյն: Իսպառ սիրոյ դրութիւնը՝ չարին գործունէութեան մէջ, ծայրայեղութիւն և մոլեռանդութիւն կը դառնայ որովհետեւ ժխտական է: Մոլեգնօրէն իսպառ կոտորելով:

Մեծագոյն պատուիրանը ըստ Յիսուսի հրահանգին ***«Պիտի սիրես Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ և քու ամբողջ մտքովդ և պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս»*** **--Մատթ. ԻԲ.36-37:** Հրահանգ պատուէրը, *հաւատալէն* աւելի ***սիրե՛լ*** է:

Սիրել՝ ազատագրել է մարդը:
Սիրել՝ սրբագործել է չարիքը ներողամտութեամբ:
Սիրել տառապիլ է:
Սիրել՝ մօտենալ է Աստուծոյ:
Գոհացումը՝ իրական սիրոյ մահն է:
զԱստուած սիրելը՝ պաշտե՛լ է, սրբութեամբ և ցնծումով: Մի՛ սպասէր սիրուիլ, կրնա՞ս սիրել. սիրէ՛: Մի՛ ակնկալէր առնել, կրնա՞ս տալ՝ տո՛ւր: Մի՝ սպասէր փնտռուիլ, կրնա՞ս փնտռել. փնտռէ՛:

69. ***Ինչ որ ես կ՚ընեմ՝ դուն հիմա չես հասկնար***՚--ԺԳ.7:

Ոչ թէ անհասկնալի է Յիսուսի ըրածը, այլ՝ մե՛նք ըմբռնելու անկարող ենք: Տիեզերքի խորհրդաւորութիւններէն շատ բիչը մարդկութիւնը կը հասկնայ: Մարդ արարած, դեռ մանուկ մըն է, որ չափահասութեան կը կարօտի: Ինչո՞ւ չենք հասկնար, որովհետեւ ճգտում մը ունինք մեր հաւատքը վերածելու՝ մեր ունեցած նախապաշարեա՛լ հասկացողութեան: Փոխանակ Աւետարանին լոյսը տարածելու, զայն կը խափանենք և կը թմրեցնենք գլիջէ դարձած անիմաստ ոճերով: «Այն ատեն Յիսուս անոնց միտքերը բացաւ, որպէսզի հասկնան Գրուածքները»--Ղուկ. ԻԴ.45:

Ամենախորհրդաւոր և գաղտնի պահուած խորհուրդը հետեւեալն է որ Յիսուս Ի՛նք ըսաւ. *«Ամէն ինչ տրուեցաւ ինծի իմ Հօրմէս. և ոչ ոք կը ճանչնայ Որդին, եթէ ոչ՝ Հայրը. և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդին և ան՝ <u>որուն ուզէ յայտնել Որդին</u>»*--Մատթ. ԺԱ.27:

70. ***՚Սատանան մտաւ անոր մէջ՚***--**ԺԳ.27:**

ԺԳ-րդ Գլխուն երկրորդ համարին մէջ կը կարդանք, թէ Սատանան Յուդայի սրտին մէջ դրած էր որ Յիսուսը մատնէ: Այժմ անոր ներսիդին կը մտնէ. կը գրաւէ զայն բոլորովին:

Սատանան Նախ գաղափարը՝ որոմը կը ցանէ, որմէ յետոյ խորհուրդը կը մարմնանայ: Չար գաղափար մը, մինչ սաղմնային վիճակի մէջ է, պէտք է որ վիժեցուի: Անգամ մը որ մարդկային խորհուրդը ծննդագործուի, այսինքն մարմնանայ, շատ դժուար և անկարելի կը դառնայ չէզոքացնել զայն:

Յակոբոս Տեարն եղբայրը, իր նամակին մէջ կը գրէ. «Ոչ ոք, երբ փորձութեան մէջ կը գտնուի, թող ըսէ. "Աստուծմէ կը փորձուիմ". բանի որ Աստուած Ինք ենթակայ չէ փորձուելու չարէն. և չի փորձեր ոչ մէկը: Իւրաքանչիւր ոք կը փորձուի՝ հրապուրուելով և խաբուելով իր ցանկութիւններէն: Այնուհետեւ ցանկութիւնը՝ յղանալով՝ մեղք կը ծնի, և մեղքը՝ հասունանալով՝ կը ծնի մահ:--13-15:

71. ***՚Յուդա...իսկոյն դուրս ելաւ: Եւ գիշեր էր՚***--**ԺԳ.30:**

Յիսուսի ընկերակցութենեն դուրս, կեանքը խաւար է: Անջատումը Ճշմարիտ Լոյսէ՝ շփոթութեան և մութի կը մատնէ մարդը: Դուրսը մութ և խաւար է, իսկ ներսը Յիսուս՝ աշխարհի Յոյսը և Լոյսն է, Իր խօսքերու լուսեղէն պայծառութեամբ կը համակէ բոլորս:

Բնական խաւարին մէջ, իրերու իսկութիւնը չերեւիր. չենք կրնար ճշդել անոնց գեղեցկութիւնը կամ տգեղութիւնը. վնասակար և գիշատիչ կենդանիներու գործելու ժամն է: Խաւարը՝ իր շղարշին ներքեւ կը թաքցնէ կեանքը, բայց կեանքը իր հաւատքի՛ զօրութեամբ պիտի յաղթէ մահուան: Հաւատացեալները վառելու են իրենց կեանքերը որ անյայտանայ խաւարը:

Որքա՜ն խաւարակուռ ըլլայ գիշերը,

Որ՛ան խաւարկուռ ըլլայ գիշերը,
պիտի չուշանայ այգալոյսը:

72. *"Նոր Պատուիրան մը կու տամ"--ԺԳ.34:*

Պատուիրան մը *ունէր* Յիսուս, *Տասնաբանեայ Պատուիրանին* վրայ, այլ ***նո՛ր*** Պատուիրան մը կու տայ:

Յիսուսի Նոր Պատուէրը հինին հետ միատեղ չ՛ընթանար: Ան՝ նոր գինին հին տիկերու մէջ չի դներ: Նոր կարկտան չ՛ունէր Հին Կտակարանին, այլ՝ որպէս աստուածային կենդանի յայտնութիւն, Իր ապրումի փորձառական և առարկայական պատկերացումով՝ մարդկային ըմբռնումը կը գերազանցէ և կը պարզացնէ զայն:

73. *"Առաջ ամէնը պիտի գիտնան"--ԺԳ.35:*

Քրիստոնէութեան կարգախօս նշանաբանը **ՍԻՐԵԼ** է: Սիրել, ամէն տեսակ զոհողութիւն յանձն առնել է, մինչեւ իսկ մահը: Առաջին ու վեհիմաստ օրինակը կու տայ Ինք Յիսուս՝ Ի՛ր կենցաղավարութեամբ:

«Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէք զիրար: Եթէ դուք զիրար սիրէք՝ առաջ ամէնը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք» --Յով. ԺԳ. 34: «Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ և անկեղծ հաւատքէն բղխած սէրը»--Ա. Տիմ. Ա 5:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յիսուս՝ Ճանապարհ, Ճշմարտութիւն և Կեանք

74. *"Ոչ ոք Հօրը կու գայ եթէ ոչ Ինձմով"--ԺԴ.6:*

Յիսուս չ՛ըսեր Ինծի *հաւատալով*, այլ Իմ *պատուիրեալներս:* Յիսուս կը սիրէ ոչ միայն անուանական և մկրտուած Քրիստոնեաները, այլ բոլոր կրօնքներու մէջ, այն ամէնը, որ Զինք կը սիրեն իրենց *նուիրումով* սիրով ու կենցաղավարութեամբ: Միթէ Խաչակիր յեղուզակները Քրիստոնեայ սեպելու ենք ու Հնդիկ Մահաթմա Կանտիները՝ դժո՞խքի դատապարտութեան:

Թողունք դատաստանական վճիռը Յիսուսի: Մենք ըլլանք միայն վկաներ:

Դիւանագէտներուն կեղծիքը կրնայ խաբել միայն վատութեան մեղսակիցները: Ճշմարտութիւնը անժխտելի, անբակտելի, անեղծանելի և անյեղելի է: Յիսուս Քրիստոս Ինքն է շօշափելի մարմնացումը, երկնային վսեմութիւնը, անկոխելի սրբութիւնը, միակ ճշմարտութիւնը, անմրցելի

բարութիւնը, անմատչելի բարձրութիւնը, կեանքի մեծ Լոյսին և աստուածային Օծութեան:

Ա՛ն որ *Ճշմարտութիւն* է, միեւնոյն ատեն *Ճանապարհ* և *կեանք* ալ է:

«Ազգերու վերակենդանութեան ճանապարհը կրօնական վերազարթօնքի ճանապարհին է»--**Գարեգին Ա. Յովսէփեան** կաթողիկոս: Յիսուսի իւրաքանչիւր խօսքը և բժշկութիւնը Յարութեան լոյսին առաջնորդող ճանապարհ մըն է: *«Քրիստոսի ճանապարհը՝ աստուածացման ճանապարհն է»*--**Ս. Գրիգոր Լուսաւորիչ**:

Կեանքը՝ կու տայ, սէրը՝ կը բաշխէ, մահը՝ միայն կ'առնէ: Կեանքը բարիին պատերազմն է, իսկ բարիին կատարելատիպը Աստուա՛ծ:

75. ***Ով որ Ինձ տեսաւ՝ Հայրը տեսաւ***'--**ԺԴ.9**:

Մինչեւ յայտնութիւը Մարդեղեալ Յիսուսի՝ Հրեաները տեսած էին վրէժխնդիր մարգարէներ ու թագաւորներ: Յիսուսի ապրումով՝ համայն մարդկութիւնը տեսաւ սիրող, կարեկցող, տառապող և իրենց ցաւերուն բաժնեկից Աստուածը: Յիսուս եղաւ հարազատ թարգմանը Հայր Աստուծոյ: Ոչ թէ Ինքզինք Հօր Աստուծոյ հաւասար ուզեց նկատել՝ այլ զԱստուած պատկերացուց մարդոց, մարդկային ըմբռնումի և իմացողականութեան մէջ դրոշմեց ճշմարիտ աստուածճանաչումը:

Մարդկային մտացածին ու երեւակայական աստուածը կրապաշտութիւն է, որովհետեւ մարդս *կերտած* աստուածները կուռք են, մինչ մարդը՝ ի՛նք աստուածա*կերտ*. Աստուծմէ յօրինուած է:

76. ***Ինչ որ խնդրէք Իմ Անուամբ***'--**ԺԴ.13**:

Կրապաշտութեան շրջանին, մարդիկ սովորութիւն ունէին աղօթելու բազմաթիւ աստուածներու անունով: Հօր անո՛ւնին Մ՛ուսաւ Յիսուս նախատեսելով աշակերտներուն աւետարանչական առաքելութիւնը համայն աշխարհի մէջ, Իրեն հաւատացողները կը բաջալերէ, որ փոխանակ աղօթելու զանազան հզօր և հրաշագործ կարծուած սուրբերու անունով, աղօթեն Ի՛ր անունովը: Որովհետեւ վերոյիշեալ՝ հրաշագործ խօսքերը չարտասանած, Ան ըսած էր. ***«Ես կ'ընթամ Հօրդ»***.- Ուստի բանի որ Յիսուս Հօրը բով պիտի երթայ (համբառնայ), շատ բնական կերպով կ'ըսէ աշակերտներուն. *«Ինչ որ խնդրէք Իմ Անուամբ պիտի կատարեմ զայն»*--13:

Մեր Փրկչին ըսել ուզածը սա է: Քանի որ ես Հօրը բով պիտի ըլլամ, պատրաստ եմ բարեխօսել, միջնորդել և աղաչել Հայր Աստուծոյ ձեզի համար: Պարզ և հասկնալի միջնորդութիւններ համեստ բանուորական դասակարգին:

Յիսուսի խօսքերը ծաղրուեցան. Իր դիմագիծը ձաղկուեցաւ, Իր Անունը ուրացուեցաւ, Իր հետեւորդները հալածուեցան, բայց Իր խօսքերը մնացին մշտահունչ և յաւերժաբարբառ: Որովհետեւ հրեշտակը ըսած էր Ս. Մարիամ կոյսին. *«Անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան մեծ պիտի ըլլայ և*

Բարձրեալի Հոգի պիտի կոչուին--Ղուկ. Ա.31: Անուն բառը երկու նշանակութիւն ունի, ***կոչում*** և ***հոչակ***:

77. "Ես եմ Ճանապարհը, Ճշմարտութիւնը և Կեանքը"--ԺԴ.6

Այս չի նշանակեր որ Յոյն, Հնդիկ կամ Եգիպտական իմաստասիրութիւնը ոչնչութիւններ են, այլ՝ Յիսուս Ի՛նքն է *մարմնացումը* այն բոլոր գրաւոր և վերլուծական ճշմարտութիւններուն և իտէալ կեանքին որ մարդիկ աստուածային ներշնչումով գրեցին դարեր առաջ: Այլապէս՝ Մովսէսն ու բոլոր Հին Կտակարանն ալ կը չեզոքանայ:

Յիսուս ըսել ուզեց թէ Ի՛նքն է Անձնաւորումը նախապէս բոլոր գրուած առաքինութիւններու և հոգեղէն իրականութիւններու:

Տարբերութիւնը ճշմարտութեան և սուտի, սա է. ճշմարտութիւնը դանդաղ կը յառաջանայ՝ իսկ սուտը կայծակնաւաք: Մարմինի վրայ հարուած մը *անմիջապէս* վէրք կ'ընէ, իսկ բուժումը ժամանակի կը կարօտի: Որովհետեւ սուտի զօրութիւնը վախի միջոցով է և մարդ-արարած վախէն շուտ կը գրգռուի: Իսկ ճշմարտութիւնը սիրոյ միջոցաւ, հասկացողութեան և համոզումի միջոցաւ կը գործէ: Համոզում և հասկացողութիւն ժամանակի կը կարօտին, հետեւաբար անհատը ժամանակի պէտք ունի որ ճշմարտութեան հաւատայ:

Գիտութեամբ և հասկացողութեամբ *սուտը* կը պարտուի վերջնականապէս և ճշմարտութիւնը յաղթական կ'ըլլայ: Լոյսի և գիտակցութեան մէջ սուտը չի կրնար պարտութեան մատնել ճշմարտութիւնը, սակայն ճշմարտութիւնը մոմ մը վառելով սուտը կը վանէ առանց իսկ պայքարելու:

78. "Բայց դուք պիտի տեսնէք Զիս"--ԺԴ.19:

Մարդ ոչ միայն *աչքով* կը տեսնէ, այլ նաեւ չօշափելով ու մտքով: Բարձրագոյն տեսողութիւնը՝ *հոգիով է*: Հաւատքը աչքին գերագոյն տեսանելիութիւնն է:

79. "Իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի"--ԺԴ.27:

Աստուծոյ հետ հաշտութիւնն ու մեղերու ներումը հոգեպարար անդորրութիւն և թողութիւն է: Երբ միանայ մեր ներքին "ես"ը, և "անձնականութիւնը" իր Ստեղծիչին հետ, այդ է խաղաղութիւն և ներդաշնակութիւն:

80. "Իմ Հայրս ատեն մեծ է քան Ես"--ԺԴ.28:

Ի՞նչպէս և ի՞նչով մեծ: Սուրբ Հոգին թող յայտնէ այս խորհուրդը իւրաքանչիւր ընթերցողին:

ԳԼՈՒԽ ԺԵ

Յիսուս՝ Ճշմարիտ Որթատունկ

81. *"Ան կը կարէ զայն"* --ԺԵ.2: Պտուղ չբերող ճիւղերը կտրելու իրաւունքը, կը պատկանի Մշակին՝ Հօր Աստուծոյ: Մենք՝ հաւատացեալներս միայն ճիւղեր կրնանք ըլլալ ու ոչ դատաւորներ:

«Ուստի դուք ալ ոեւէ մէկը մի՛ դատէք ժամանակէն առաջ, մինչեւ գայ Տէրը, որ մարդոց մութ գաղտնիքները լոյսին պիտի բերէ»--Ա. Կոր. Դ.5: «Եւ երեւան պիտի հանէ միտքերուն մէջ ծածկուած խորհուրդները»:

82. *"Ինչ որ ուզէք՝ խնդրեցէ՛ք և պիտի ունենաք"*--ԺԵ.7 և 16-17:

Պիտի ունենաք *այն* ինչ որ ծառատունկը պիտի տայ: Որթատունկի ճիւղը չի կրնար պահանջել սալոր, իր ծառէն: Տունկի մը և ոեւէ ծառի մը ճիւղը կրնայ խնդրել իր բունէն որ *լաւագոյն* պտուղը հասցնէ:

Յիսուս չթելադրեր Իր աշակերտներուն ճմահաճ և կամայական խնդրանքներ ուղղել իրենց բունին՝ որթատունկին, այլ ծառին և տունկի՛ն ի նպաստ աղօթք և աղերս հայցել Հայր Աստուծմէ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Հալածանքները

83. *"Ճանչցան ո՛չ Հայրը և ո՛չ ալ Զիս"*--ԺԶ.4:

Բունանալը՝ հակաԱստուած արարք է: Բունանալ և պարտադրել ուրիշը, յառաջ կու գայ Աստուած չի ճանչնալէ: Հա՛յրն ու Որդին ճանչնալու միակ կերպը՝ «ճանչնալ է Քրիստոսը, Անոր Յարութեան զօրութիւնը, և Անոր չարչարանքներուն մասնակից դառնալ»--Փիլիպ Գ.10:

զԱստուած չենք կրնար լման ճանչնալ, սակայն Զայն ճանչնալու *մտադրէմք*: Մեզի *հաւատոյ* մրն է որ օր պիտի ճանչնա՛նք Զինք: *Հիմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով*'--Ա.Կորն. ԺԳ.12

84. *"Դեռ շատ բաներ ունիմ ձեզի ըսելու"*--ԺԶ.12:

Ճշմարտութեան Հոգին՝ Ի՛նք պիտի առաջնորդէ ձեզ: Գրութիւնները օգտակար կրնան ըլլալ, սակայն Առաջնորդողը պէտք է որ Սուրբ Հոգին Ի՛նք ըլլայ: Առաջնորդել՝ նաեւ սորվեցնել կը նշանակէ: Այս ոգեկան ներհայեցողութեան համար դիմելու ենք կարգ մը Ս. Հայրապետներու և ներկայ հաւատացեալներու աւետարանաշունչ մեկնաբանութիւններուն: Աստուածայայտնութիւնը Յիսուս Քրիստոսով վերջացած չէ, այլ՝ Անով սկսաւ ու Ս. Հոգիով կը շարունակէ յայտնուիլ:

Յիսուս ինչո՞ւ չ՛օրինագծեց ընկերա-քաղաքական յարաբերութիւններ և

կրօնաբարոյական վերաբերումներ:

Մարդկութիւնը կ'ապրէր իր մանկութեան դարաշրջանը ու անպատեհ և անըմբռնելի պիտի ըլլար, վաղ անցեալի մարդկութեան, ներկայի ազատութեան և անկախութեան տեսլականը բացատրել: Քսաներորդ դարու ազատութեան գաղափարը, ըլլայ քաղաքական և կրօնական, բանի մը հարիւր տարուան իրականութիւններ են միայն: "Անհատի՛ն" իրաւունքի տեսլականը, հազիւ յիսուն տարուայ տեսութիւն է միայն, և անգործադրելի շատ մը պետութիւններու կողմէ:

Մարդկային գիտակցութիւնը տակաւին իր կոկոն շրջանին մէջն է: Երբ մարդու խորհողութիւնն ու տրամաբանութիւնը բողբոջի և հոգին լուսաւորուի իր Արարիչին Սուրբ Հոգիովը, ա՛յն ժամանակ հասած պիտի ըլլայ "Ճշմարտութեան Հոգին": Ապա թէ ոչ, գաղափար մը և պատուէր մը առանց ըմբռնումի՝ կմախք է:

65. *"Դուք պիտի լա՛ք և պիտի ողբա՛ք"*--ԺՋ.20:

Հաւատացեալին լացն ու ողբը ստեղծագո՛րծ ողբ է նման ծննդագործող երկունքի, որ ցնծութեան և ուրախութեան պիտի փոխակերպուի:

**66. *"Քաջալերուեցէ՛ք, որովհետև ես յաղթեցի աշխարհի"*
--ԺՋ.33:**

Յիսուս ի՞նչպէս յաղթեց աշխարհի: Սուրն ու մահացնող զէնքը ճանչցուած էր ցարդ իբր յաղթութեան զօրաւորագոյն ուժը: Յիսուս այս ուժին դէմ ճակատեցուց ոգեկա՛ն և ներհայեցողական ուժը՝ մեղմութիւնն ու բաղցրութիւնը: Դիտեցէ՛ք լեռներու վրայ ապառաժները որոնք մաշած և հիւծած են բնութ հովերու շփումներով և անձրեւի մեղմ կաթիլներով:

Միակ յաղթանակը որ Յիսուս կը յորդորէ՝ *առանց բռնանալու միրո՛յ յաղթուիլն է*: Չի բռնանալ՝ չէզոք և կրաւորական դիրք չի նշանակեր, այլ՝ ապրի՛լ սիրոյ ուժգնութեամբ, կարեկցութեամբ զոհողութեամբ և ողորմածութիւն սփռելով չորս դին, այսինքն՝ *չարը յաղթել բարիով*:

ԳԼՈՒԽ ԺԷ

Գերագոյն Քահանայապետին աղօթքը առ Իր Հայրը

67. *"Յիսուս...Աչքերը երկինք բարձրացուց և աղօթեց"*--ԺԷ.1:

Յիսուս որպէս Վեհագոյն Քահանայապետ ու Միջնորդ՝ կ'աղօթէ Իր Հօր: Նախ Իր անձին համար, յետոյ՝ աշակերտներուն, ու երրորդ՝ բոլոր անոնց խօսքով՝ Իրեն հաւատացողներուն համար: Հետեւաբար այս աղօթքով՝ Յիսուս աղօթած կըլլայ *բնեզի և ինձի* համար ալ:

(Այս աղօթքը առանձինն հրատարակուած է)

88. ***"Յաւիտենական կեանքը այս է"*--ԺԷ.3**:

"Որ ճանչնան Քեզ միակ ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս Քրիստոսը, զոր Դուն ղրկեցիր":

Ճանչնալու միակ կերպը՝ յարաբերիլ է: Իրարու մտերմանալ է: Խորհուրդներու միաձուլում է նպատակի համար և աղօթքով:

89. ***"Ես չեմ աղաչէր աշխարհի համար"*--ԺԷ.9**

Այստեղ, "աշխարհ" բառը Ձինք դատապարտողներուն և անհաւատներուն կ'ակնարկէ, ու ոչ աշխարհի ժողովուրդներուն:

90. ***"Պահես զանոնք չարէն"*--ԺԷ.15**:

Յիսուս մոռցած է Ինքզինքը, Իր միակ մտածումը՝ Իր աշակերտներն են: Ի՞նչ անձնուրացութիւն և սէր հանդէպ Իր աշակերտներուն:

91. ***"Այն սէրը, որով Դուն Ձիս սիրեցիր, ըլլայ անոնց մէջ"***
--ԺԷ.26:

Ինչպիսի՞ սէր է աստուածային Սէրը: Ոչ թէ անձնասիրական ու ամբարտաւան, այլ բարեգութ ու ողորմած սէր ներգործելու է նաեւ մեր մէջ: Ահաւասիկ գերագոյն մաղթանքը Յիսուսի առ Իր աշակերտներուն և Իրեն հաւատացողներուն հանդէպ: *"Հոգի Աստուծոյ Հիմը"* անխորաթափանցելի է անոնց, որոնք միայն *մարմին* կը փնտռեն հասնիլ: Իսկ անոնք որ կը բիւրեղանան իրենց հոգիով և կը դառնան անանձնական՝ *"պիտի տեսնեն զԱստուած"*:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յիսուսի մատնութիւնը և ձերբակալութիւնը

92. **"Յուդա եկաւ...ջահերով, լապտերներով և զէնքերով"--ԺԸ.3**:

Ջահերով և լապտերներով պըտըտողները անոնք են, որոնք կապրին խաւարի՛ մէջ: Ձարին ուժը՝ *զէնքի՛* մէջն է, իսկ Յիսուսի զօրութիւնը՝ *Հոգւոյ* մէջ:

93. ***"Ձո՞վ կը փնտռէք"*--ԺԸ.4**:

Յիսուս կը ձարունակէ Իր հարցումը այժմու մարդկութեան. ***"Ձո՞վ կը փնտռէք": "Ի՞նչ կը փնտռէք": "Կեանքէն ի՞նչ կ'ակնկալէք":***

Մարդկային ջահերն ու լապտերները բաւարար չեն յայտնացուցանելու Յիսուսը: Աշխարհի լոյսը աղօտ է, պղտոր և անբաւարար:

94. *՝Այդ սուրդ նորէն իր պատեանը դիր՝*--ԺԸ.11:

Հիմա սուր գործածելու ժամանակը չէ: Հաւատացեալներուն մեռնելո՛ւ ու նահատակուելո՛ւ դարաշրջանն է ներկայ դարը: Բնական մարդուն և բնազդի մղումներուն խոտոր կու գայ այս զգացումը և այս ըմբռնումը: Այս պատճառաւ Յիսուս աղօթեց ըսելով, "որպէսզի այն սէրը, որով Դուն Ձիս սիրեցիր, ըլլայ անոնց--աշակերտներուն--մէջ":

95. *՝Միթէ դո՞ւն ալ Անոր աշակերտներէն ես՝, ՝Ոչ, չեմ՛*--ԺԸ.2:

Սուրի զօրութիւնը ցոյց տուող ու մետաղի ուժին ապաւինող Պետրոս, կ՛ուրանայ իր Տէրը: Սուրը պարագայական զօրութիւն է, իսկ հաւատքը՝ համոզումներու ու նուիրումի ընդերքէն ի յայտ կու գայ:

Պետրոսի *՝ոչ, չեմ՛* ուրացումը՝ գէթ իրաւացի էր ու ոչ սուտ: Որովհետեւ սուր վերցնելով իր հակառակորդին, ան արդէն Յիսուսի աշակերտութենէ դադրա՜ծ էր:

96. *՝Զգեցուին...և Ջաճիկը ուտեն՛*--ԺԸ.28:

Ահաւասիկ Օրէնքին ցուցուցած կեղծ արդարութիւնը: Տարրին ու գիրին բացատրած սխալ մեկնաբանութեան համար Յիսուս Իր ապրումով ու նահատակութեամբ ցոյց տուաւ Աստուծոյ սիրոյ դիմագիծը: Օրէնքին աշակերտող փարիսեցիներ՝ Արդար մը սպաննելու խիղճ չեն ըներ, իսկ Պիղատոսի ապարանքը մտնելէ, կը զգուշանան.

Ա՛յս է կատարեալ փարիսեցիութիւնը նաեւ ներկայ բրիստոնեաներու ըմբռնումին:

97. *՝Մի՛չ ասիկա, այլ՝ Բարաբբան՛*--ԺԸ.40:

Մոլեռանդութեամբ ու հոգեկան կուրութեամբ եղած ընտրութիւնը: Ուրացան Ճշմարտութիւնը, Կեանքը և Ճամբան և ընտրեցին աւազակ մը, որովհետեւ ազգային հերոս ճանչցուած էր ան: Քանի՞ ազգային հերոս ճանչցուածներ դաւաճանած չե՛ն իրենց հայրենիքի բարօրութեան:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Աճա Մարդը

98. *՝Դուք ո՞վ ո՞ւմ խաչեցէք՛*--ԺԹ.6:

Ուրախանչիւր անձ՝ ի՛նչ կը խաչէ Յիսուսը իր մեղքերով ու չար արարքներով: Թէեւ Հրեաները Պիղատոսի ձեռքով խաչեցին Յիսուսը, սակայն Յիսուս ըսած էր, *՝ով որ Ջիս հոս ձեռքդ մատնէ, անոր մեղքը աւելի մեծ է՛*

99. ***"Պառմուճանիս վրայ վիճակ ձգեցին"***--ԺԹ.24:

Յիսուսի խաչելութեան գերագոյն վիճակը՝ "քախտ"-ը Սատանան ձգած էր:

Զինուորները՝ վիճակ ձգելով՝ մէկը պատմուճանին տիրացաւ իսկ միւսները բան մը չկորսնցուցին: Իսկ Սատանան՝ Յիսուսը խաչել տալով, որ տեսակ մը վիճակ ձգել էր, իր իշխանութիւնը և տէրութիւնը կորսնցուց, որովհետեւ Յիսուս յաղթեց մահուան ու բացաւ դուռը գերեզմանին:

100. ***"Յովսէփ՝ Յիսուսի ծածուկ աշակերտը և Նիկոդեմոս"***: --ԺԹ.38:

Յիսուսի հաւատարիմ աշակերտները, յարուցեալ Ղազարոս, և բոլոր իր սիրելիները իրենց սարսափէն անյայտացած են: Սակայն ծածուկ աշակերտ Յովսէփ և զգոյշ Փարիսեցի Նիկոդեմոս, դարձած են բաջազուններ ու կը թաղեն Յիսուսը: Յիսուսի մեռած մարմինը, այս փարիսեցիները չի պղծեր, այլ կը սրբացնէ ու կը կերպարանափոխէ, դարձնելով զիրենք *աշակերտ ու վկայ*:

101. ***"Անէն Յիսուսի մարմինը"***--ԺԹ.40:

Յիսուսի Մարմինը երբ կենդանի էր ու ջողարձակ, անջօջափելի էր ու անհպելի, իսկ երբ մեռաւ Յիսուս, Իր մարմինը դարձաւ ձեռնելի:

Մեր այսօրուայ շօշափածը մեռա՞ծ առարկաներ և գաղափարներ են, թէ կենդանարա՛ր ու հոգեվա՛ռ:

ԳԼՈՒԽ Ի.

Թափուր Գերեզմանը և Յիսուսի Յարութիւնը

102. ***"Քարը Գերեզմանին դռնէն վերցուած կը տեսնէ"***--Ի.1:

Մինչեւ Գերեզման գալերնին, կիները կը մտահոգուէին թէ ո՞վ պիտի վերցնէ քարը Գերեզմանի դռնէն: Երբ հասան Գերեզման, տեսան թէ քարը արդէն վերցուած էր: Իրենց մտահոգութիւնը աւելորդ էր:

Կեանքը ապրելու է դրական տեսութեամբ: 5000-ը կերակրելու ժամանակ՝ աշակերտները չփոթեցան թէ ի՞նչ ընել պէտք էր: Ակնկալութեան մէջ, աշակերտները կանչվռտեցին, երբ Սամարիոյ մաքսապետները արգիլեցին աշակերտներուն անցքը իրենց երկրէն, երկինքէն կրակ ուզեցին իջեցնել այրելու համար իրենց մրցակից դրացի Սամարացիները:

103. ***"Չէին գիտեր գրուածքը"***--Ի.9:

Հոն էին գրուածքն ու տարրը, բառերը և գիրերը, սակայն աշակերտները տեղեակ չէին անոնց տակ թաքնուած հոգեղէն ու կենդանարար զօրութեան և

իմաստին: Գիտէին գրուածքին լեզուաբանական ու բերականական կազմաւորութիւնը միայն:

Ազգակրօնական ու ոաբբունական մեկնաբանութիւնները պատճառ եղան որ Հրեաները՝ Յիսուսի մէջ տեսնեն միայն Գալիլեացին, ատաղցագործը կամ Նազովրեցի Վարդապետ մը: Մի նայիր Անոր Ոտքերուն, այլ՝ նայէ՛ *Իայլերուն*: Տեսնե՛լ Յիսուսի երկնակենցաղ աստուածութիւնը, շնորհ մը և պարգեւ մըն է:

104. ***Ով կին ինչո՞ւ կու լաս, ո՞վ կը փնտռես'*--Ի.15:**

Յիսուս Իր յաղթական Յարութենէն վերջ իսկ, նոյն կարեկից Անձն է, ու կը հարցնէ Մարիամ Մագթաղենացիին, *"Ինչո՞ւ կու լաս"*: Իր կարեկցութեան խօսքերը, Իր Աջին հպումը, Իր նայուածքին սեւեռումը կը մատնեն Ջինքը:

105. ***Յիսուս ըսաւ անոր. "Մարիամ"*--Ի.16:**

Յիսուս Ի՛նք կը յայտնուի Ջինք սիրողներուն: Ան կը միաձուլէ մարդկային գիտակցութիւնը աստուածային գիտակցութեան հետ: Մեզ մեր *անուններո՛վ* կը կանչէ:

106. ***Գնայ իմ եղբայրներուս, և ըսէ'*--Ի.17:**

Դառնութիւն չի կայ Յիսուսի հոգւոյն մէջ հանդէպ Իր դասալիք աշակերտներուն: Անոնց ուրացումը, վախկոտութիւնը և պարտազանց ըլլալը չի յիշեր երբեք, այլ զանոնք *"եղբայր"* կ'անուանէ:

Այս է մեր Տիրոջ Յիսուսի անսպառ սիրոյ անյիշաչար և բաղցրահայեաց տեսութիւնը: Կայէնի նման չի փաստաբաներ ըսելով, "միթէ ես իմ եղբօրս պահապա՞ն եմ": Յիսուս տէր կ'ըլլայ Իր աշակերտներուն և զանոնք *եղբայր* կանուանէ:

107. ***Խաղաղութի՛ւն ձեզի'*--Ի.19:**

Յարութենէ վերջ առաջին խօսքը Յիսուսի՝ "Խաղաղութե՛ան" ոգեղանջն է Իր աշակերտներուն: Յիսուսի ներկայութեան՝ խռովութիւն, յուզում և շփոթութիւն կ'անյայտանան: Յիսուս Գալիլիոյ ծովուն ալիքները սաստելով խաղաղեցուցած էր: Իսկ աշակերտներուն գաղտնի հաւաքոյթին ուր իրենց տագնապած խղճին հաշտութիւն կը փնտռէին, Յիսուս Ինք որպէս լուսայորդ Միածան Իր լուսեղէն հզօր Ներկայութեամբը կը ձայնէ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ: Խաղաղութիւն բառը՝ նաեւ կը նշանակէ *հաշտութիւն*:

109. ***Ինչպէս որ Իմ Հայրս Ջիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ'*:**
--Ի.21:

Յիսուսի մօտ տնտնալ և վարանիլ չի կայ: Յարութենէ յետոյ Յիսուս

անմիջապէս գործի կը ձեռնարկէ: Կը բաջալերէ և կը խրախուսէ Իր աշակերտները: Կը փչէ անոնց վրայ և կու տայ Հոգին Սուրբը: Կը քարձրացնէ զանոնք աջակերտութենէ ու Առաքեալ կ'անուանէ: Անոնց թերութիւնները նկատի չ'առներ, գիտէ որ ժամանակի ընթացքին անոնք պիտի յառաջանան դէպի կատարելութիւն:

Մարդիկ բարոզիչներու թերութիւնները կը ***փնտռեն,*** իսկ Յիսուս՝ անոնց թաքուն ***կարողութիւնները:***

110. ***Թովմաս կ'ըսէ. "Եթէ Անոր ձեռքերուն վրայ չտեսնեմ... չեմ հաւատար"--Ի.25:***

Ստուգապաշտ (agnostic) հաւատացեալն է Թովմաս: Երբ կը հանդիպինք անձերու որոնք իրապաշտ են և ստուգութիւն կը պահանջեն հաւատալու այն նուիրական համոզումներու որոնք մենք ընդունած ենք հաւատքով ու սիրով, ապշութիւն և զարմանք կը պատճառեն անոնց:

Յիսուս այդպիսի ստուգապաշտ հաւատացեալնե՛րն ալ կը սիրէ: Յիսուս յայտնեց Ինքզինքը նաեւ այդ դասակարգի մարդոց: Միայն մէկ ստորադասութեամբ: Ան ըսաւ Թովմասի.

'Դուն Ինծ տեսար և հաւատացիր.
Երանի՛ անոնց որ չեն տեսած ու կը հաւատան":

Ստուգապաշտ հաւատացեալներն ալ պիտի հասնին Աստուծոյ Թագաւորութեան, սակայն ոչ *երանելիներու* հոյլին:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յիրերական չճանչին հրաշքը

111. ***Յիսուս դարձեալ Ինքզինք յայտնեց'--ԻԱ.1:***

Յիսուսի յայտնութիւնը, Զինքը ճանչնալը և Իր խորհուրդներուն թափանցելը, աստուածային ջնորհ մը նկատուելու է: Մարդկային ճիգն ու վարժութիւնը կրնան օժանդակել, սակայն գլխաւոր նախապատճառը աստուածային Ինքնայատուկ և անկապտելի ջնորհն է:

112. ***"Յիսուս կեցած էր ծովեզերքը, բայց աշակերտները չի ճանչցան Թէ Յիսուս էր'--ԻԱ.4:***

Յիսուս միշտ հոն է մեր կեանքի խաչմերուկին: Յիսուս շարունակ հոն կանգնած է մեր ամենօրեայ գործառնութիւններու մէջ: Մեր գերլարուած գործունէութեան պատճառով Զինք չենք տեսներ և Զինք չենք ճանչնար:

"Ձեռքս բան մը ունի՞": Անդուլ կարեկցութիւն և սէր կը ճառագայթէ

մեր Տիրոջ բաղցրաձայն հարցումէն:

Մեզմէ քանիներո՞ւ իրենց յաջողութիւնը և տաղանդը կը վերագրեն Յիսուսի: Աշակերտները երբ յաջողութիւն գտան իրենց որսին (ձուկերուն), այդ յաջողութիւնը վերագրեցին Յիսուսի: Այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսին. ***"Տէ՛րն է անիկա"***:

113. ***"Եկաւ Յիսուս, առաւ հացը և առաւ անոնց"***--**ՅԱ.13**:

Յիսո՞ւս է որ կու տայ մեզ մեր ամենօրեայ ուտելիք հացը, թէ կը կարծենք ստանալ մե՛ր միջոցներով:

114. ***"Սիմո՛ն Յովնանի, կը սիրե՞ս Ջիս"***--**ՅԱ.15**:

Վերոյիշեալ հարցումը ոչ միայն կը յայտնաբերէ Յիսուսի սէրն ու բաղցրութիւնը հանդէպ Իր խիզախ աշակերտին, այլ կարծես յաւերժական երկնակամարը կը բացուի ու Աստուած Ինք կը յայտնուի որպէս հոգեպարար Այգալոյսող Միածան, Մէր, և անյիշաչար Արարիչ:

Ոչ միայն մեր Տէրը Յիսուս Յարութիւն առած էր գերեզմանէն, այլ ամէնողորմ Արարիչը կ'արմատանայ մարդկային ըմբռնումին և գիտակցութեան մէջ: Որպէս բարձունքի և վսեմութեան մարմնացում, Յիսուս Իր արցունքախօս աչքերը կը սեւեռէ Ջինք ուրացող Պետրոս աշակերտին և փոխանակ իրմէ խոստովանանք պահանջելու, սիրաբորբոք հարցումով զինք կը փոխակերպէ հաւատարիմ և անվեհեր առաքեալի:

Այս անբինախնդիր ու վեհանձն հարցումով, Յիսուս կը բանայ աստուածճանաչումի ճշմարիտ ուղին ու լուսեղէն ճանապարհը:

115. ***"Արածէ՛ Իմ ոչխարներս"***--**ՅԱ.17**:

Յիսուս, հովիւ կը կարգէ հաւատուրաց Պետրոսը Իր ոչխարներուն: Յիսուսի առաջադրութիւնը մարդոց համար՝ կատարեալ ըլլալ է նման Աստուծոյ: Յիսուս՝ մերժումի և անջատումի պատճառ չի նկատեր այլեւայլումմը, որ խոյանք մը դարձաւ դէպի կատարելութիւն: Յիսուս՝ հանդուրժող է նոյնիսկ ուրացող և ուխտադրուժ Պետրոսի: Մակայն այս ոչ արդարացում է և ոչ ալ բաջալերանք:

Ուստի մենք ալ մեր կարգին ինչո՞ւ չի հանդուրժենք կարգ մը հոգեւորականներու սխալանքներուն կամ քարոյական այլեւայլումներուն: Կարելի չէ՞ արդեօք, առանց զանոնք արդարացնելու, ըլլալ հանդուրժողական:

Ընդհանրապէս հոգեւորականներէ կը յուսացուի կատարելութիւն: Որ արդար ակնկալութիւն է: Իսկ Յիսուս ցոյց կու տայ նաեւ հանդուրժողութիւն...:

Գրուած՝ Նոյեմբեր 18, 1988 Ալպէրտ Նորատունկեան
Թորոնթօ, Գանատա Հայ-Քրիստոնեայ